Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 237 ԵՐԵՔՇԱԲԹԻ 16 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1884 (Ն. Տ.) 28 ՀՈԿՏԵՄԲԵՐ 9 ՄՈՒՀԱՐՐԷՄ 1302

ՊԱՅՄԱՆՔ
Յանուցմանց տողը մէկ անգամի համար 3 ղուրուշ · երկու անգամի համար 2 ղուրուշ է · աւելի անգամներու համար զատ սակարկութիւն կըլլայ ·
Օրագրոյս վերաբերեալ նամակ կամ որ և իցէ գրութիւն պէտք է ուղղել
«Առ խմբագրութիւն ԱՐԵՒԵԼՔ օրագրի »
ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ · Ղալաթիա, Նորատունկեան խան ·
իսկ գաւառներէն հեռագրել հասցէիւ՝
درعلیه‌ده غلطه‌ده نورادونکیان خانده { آرەولك }
غزته‌سی اداره‌سنه

40 ՓԱՐԱ

ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ	համար	Տարեկան	դահեկան	արժէք	200
»	»	Վեցամսեայ	»	»	100
»	»	Եռամսեայ	»	»	50
»	»	Հատով	»	»	1
Գաւառաց	համար	Տարեկան	»	»	240
»	»	Վեցամսեայ	»	»	120
»	»	Եռամսեայ	»	»	60
Օտար	երկիրներ	Տարեկան	Ֆրանք		56
»	»	Վեցամսեայ	»		28

Դուրս ղրկուած լրագրաց ճամբու ծախքը խմբագրութեան վրայ է ·

40 ՓԱՐԱ

Կ. ՊՈԼԻՍ
ԵՐԵՔՇԱԲԹԻ 16 ՀՈԿՏԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԵՐԵԿԻ ԹՂԹԱԲԵՐԷՆ
ՔԱՂՈՒԱԾ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

ԹԱԳՈՒՀԻՈՅՆ ՃԱՌԸ. Անգլիոյ Խորհրդարանին աշնային նստաշրջանը բացուեցաւ Հոկտ. 11/23ին, Վիքդորիա Թագուհւոյն սա ճառով.

«Միլորտք և Պարոնայք.

«Ձեզ վերստին կը համախմբեմ սովորականէն շատ կարճ դադարէ մը յետոյ, որպէս զի այսօրուընէ կարենաք նորէն քննել՝ Խորհրդարանին մէջ ժողովրդեան ներկայացուցման ծանր խնդիրը։

«Կը շարունակեմ միակել բարեկամական յարաբերութիւններ համայն օտար Տէրութեանց հետ։

«Սուտանէն առնուած լուրեր այդ երկրի կացութեան վրայ դժնդակ անըստուգութեան մը մէջ կը թողուն զմեզ. բայց Կորտոն զօրավարին Խարդումի պաշտպանութեան մասին ցոյց տուած նշանաւոր քաջութիւնն, հաստատամտութիւնն ու կարողութիւնն արժանի են կատարեալ երախտագիտութեանս։

«Իմ զօրացս դէպ ի Տոնկոլա չուելուն նպատակն է ապահով վիճակի մը մէջ դնել և փրկել այս քաջարի սպայն և ամեն անոնք որ հաւատարմապէս օժանդակեցին նմա։

«Եգիպտոսի մէջ, բոլոր կարողութեամբս կ'աշխատիմ նոր բարուքումներ մտցնելու, և եգիպտական կառավարութեան օժանդակութիւնս նուիրեցի ելմտական դժուարին կացութեան մէջ յորում մնացած էր վերջին Դեսպանախորհրդոյ անյաջողութեան պատճառաւ։

«Կը ցաւիմ որ Թրանսվաալի (Պոէրաց երկրին) հարաւային-արեւմտեան (անգլիական) սահմանագլխին վրայ դէպքեր տեղի ունեցան, որք մեր կողմէ աչալուրջ ուշադրութիւն կը պահանջեն։ Բարեյուսոյ Հրուանդանի կառավարութեան հետ համաձայնութեամբ, կ'ըզբաղիմ որոշելու հարկ եղած միջոցներն, որպէս զի ճշդիւ գործադրուի (Անգլիոյ և Պոէրաց միջեւ) այս տարի կնքուած պայմանագիրն, (որ կը գծէր Թրանսվաալի Պոէրաց և Բարեյուսոյ Հրուանդանի անգլիական գաղթականութեան և սորա հպատակ բնիկ ցեղերուն սահմաններն ու յարաբերութիւնները)։

«Այս գործոյ վերաբերեալ պաշտօնագիրք ի մօտոյ պիտի ներկայացուին ձեզ։

«Պարոնայք անդամք Երեսփոխանաց ժողովոյ.

«Սուտանի մէջ ձեռնարկեալ զինուորական գործողութիւնք պիտի պարտաւորեն կառավարութիւնը դրամական նոր վարկ մը խնդրել ձեզմէ։ (*)

«Միլորտք, Պարոնայք.

«Ընտրողութեան իրաւանց ընդարձակման վերաբերեալ (Լորտերէն մերժուած) օրինական ծրագիրն ի մօտոյ պիտի ներկայացուի ձեր քննութեան։

«Խոնարհապէս և վստահապէս կը յուսամ և կը մաղթեմ որ Ամենակարողն Աստուած օրհնէ և արդիւնաւոր գործէ ձեր աշխատանքներ։»

ՉԻՆ. Քուրպէ ծովակալը ծանոյց Հոկտ. 21ին թէ Ֆորմոզա կղզւոյն բոլոր նաւահանգիստք պաշարման ենթարկեալ են, որով կղզւոյն չինացի պահապան զօրքերն արտաքին աշխարհի հետ յարաբերութենէ ընդհատուած են։—Չինացիք վհատած չեն իրենց վերջին պարտութիւններէ որ թէ՛ ի Թօնքին և թէ՛ ի Ֆորմոզա։ Առաջ մէկ երկու ժամ կռուէ յետոյ ի փախուստ կը դառնային։ Այժմ կը դիտուի որ առաւել երկար ժամանակ կը դիմադրեն, և աւելի կորուստ կը պատճառեն Ֆրանսացւոց, որք կը զարմանան առաջուընէ շատ աւելի սաստիկ ընդդիմութիւն մը գտնելով «Երկնային կայսրութեան զաւակաց» կողմէ։ Պ. Ժիւլ Ֆէրրի հրաման ղրկած է որ, խորհրդարանական նստաշրջանի վերսկսման առթիւ, ծովակալք և հրամանատարք քանի մը վճռական յաղթութիւններ ձեռք բերեն, որք ամեն փաստաբանութենէ առաւել համոզիչ կերպիւ կրնան փակել հակառակորդաց բերանները։ Բայց Չինացիք կը դարմանեն իրենց կրած կորուստները, նաւեր կ'ընկղմեն նաւահանգստաց մէջ՝ զանոնք անմերձենալի գործելու համար ֆրանսական նաւատորմին, և ջարդուած հազարաւորներուն տեղ դիւրաւ կը գտնեն նոր զօրք։

ԵԳԻՊՏՈՍ. Կը հաստատուի թէ եգիպտական կառավարութիւնն արդարեւ ետ առած է գլխաւճարի դադարման անօրինութիւնը։ Ցատկցեալ հասոյթք նորէն կը վճարուին Պարտուց Սնտուկին։ Բայց օտար պատուիրակք ետ չպիտի կենան իրենց դատէ, զոր ձեւապէս յառաջ պիտի մղեն։—Հոկտ. 20ին Միջազգային Դատարանն որ յԱղեքսանդրիա՝ առաջին անգամ մտիկ ըրաւ օտար պատուիրակաց բողոքն ընդդէմ Նախարարութեան Նուպար փաշայի. բայց Դատարանը չընդունեց օտար պատուիրակաց փաստաբան Պ. Ֆիկարիի փաստը թէ դատին ստիպողականութիւն տրուի, և աճապարելու պէտք չտեսնելով, Նոյ. ի 17ի օրը սահմանեց դատին ունկնդրութեան։—Ֆրանսայի Երեսփոխանական ժողովոյ Հոկտ. 20ի նստին մէջ, եգիպտական խնդրոյ վրայ Պ. Կավառոնի հարցապնդումը մէկ ամիս յետաձգեցաւ ըստ խնդրանաց Պ. Ժ. Ֆէրրիի, որ յայտնեց թէ անգլիական կառավարութիւնն իրեն խօսք տուած է այս խնդրոյ մասին պաշտօնական զեկուցումներ ընել Նոյ. ի սկիզբը։

ՊԵԼՃԻՔԱ. Պրիւքսէլ, 19 Հոկտ. Ազատականք յաղթող հանդիսացան բաւական մեծամասնութեամբք ամեն կարեւոր քաղաքաց մէջ, ի բաց առեալ զՄեքլէն, ուր Արքեպիսկոպոսին ազդեցութեան շնորհիւ Կղերականք փոքր մեծամասնութիւն մը շահեցան։ Ի Պրուքսէլ Ազատականաց մեծամասնութիւնը կը հասնի 4,000ի և յԱնվէրս՝ 1,500ի։ Քաղաքային և գիւղային խորհրդոց ընտրող են տարեկան 10 ֆրանք ուղղակի տուրք վճարողք, և ուրիշ առանձնաշնորհեալ դասեր։ Այս ընտրութեանց արդիւնքն է մեծ պարտութիւն մը վասն Նախարարութեան, և դատապարտութիւն դպրոցային նոր օրէնքի՝ մեծ շրջանակաց կողմէ։—Հոկտ. 21. Պրուքսէլի Քաղաքապետն ի նիստ հրաւիրեց ազատական քաղաքային և գիւղային խորհրդոց պատուիրակութիւնը՝ Թագաւորին աղերսագիր մը մատուցանելու համար, որպէս զի Նախարարութիւնը պաշտօնանկ լինի և երկու ժողովները լուծուին։ Ազատական լրագիրք ալ միահամուռ կը պահանջեն Խորհրդարանին վաղընդփոյթ լուծումը։—Պահպանողական և ազատական կուսակցութիւնք կ'ամբաստանեն զիրար թէ Յեղափոխութիւն մը յառաջ բերել կ'ուզեն։

ԿԻՊՐՈՍ. Կիպրոսի կառավարիչ Սըր Ռ. Պիտըլֆ այս տարւոյ մարտին վերջացած ելմտական շրջանին վրայ իւր տեղեկագրոյ մէջ կ'ըսէ. Անցեալ տարւոյ ելևմուտն և ծախքն յոյժ նպաստաւոր վիճակի մէջ էին։ Կղզւոյն ելևմուտք հասան 194,031 անգլ. ոսկւոյ բարձր գումարին, այսինքն 4,717 ոսկի աւելի քան նախորդ տարին. մինչ ծախքն էր 111,685 ոսկի, այն է՝ 7,831 ոսկի նուազ քան Խորհրդարանէն քուէարկեալ գումարը վասն այս տարւոյ, և 8,950 ոսկի նուազ քան նախորդ տարւոյ ծախքն։ Առաւելութիւն ելևմտից ի վերայ ծախուց էր ուրեմն 82,366 ոսկի, և հետեւապէս Խորհրդարանը բացէն փոքր գումար մը միայն քուէարկելու պէտք ունի՝ ամբողջացընելու համար Թուրքիոյ վճարելի տարեկան գումարը։ Կառավարիչը կը տեղեկագրէ նաեւ թէ կղզւոյն բնակչաց և զօրաց առողջութիւնը շատ լաւ է։

ՈՒԺԱՆԱԿ ՅԱՆԳԼԻԱ. Իռլանտայի ծպտեալ ոստիկանք կարեւոր ձերբակալութիւն մ'ըրին ի Լիվրբուլ։ Ամսոյս 15 ին գիշերը, Լօրտ Կլայվ շոգենաւէն կ'ելնէին Ֆիլատելֆիայէ եկող ուղեւորներ։ Ոստիկանք սոցա մէջէն ձերբակալ ըրին հօնգարացի մը, որոյ վրայ կասկած ունէին, և որոյ պայուսակաց մէջ գտան 30 ծրար ամերիկեան ուժանակ։ Կը կարծուի թէ այս ուժանակով ի գործ պիտի դրուէին Անգլիոյ մէջ այն նոր դաւադրութիւնք զորս սպառնացած էր յառաջագոյն Օ'Տօնովան Ռոսա, հրաշունչ պարագլուխն Ֆէնիանց յԱմերիկա։ Անգլիացի ծպտեալ ոստիկանք, կամ [illegible], այս միջոցիս խիստ հսկողութիւն ի գործ կը դնեն ո՛չ միայն Անգլիոյ այլ և այլ մասանց, այլ նաեւ Պելճիոյ նաւահանգստաց մէջ, ուստից կը կարծուի թէ Անգլիա պիտի անցնին՝ Ամերիկայէն եկող Յեղափոխականք։

ՌՈՒՍՔ Յ'ԱՖՂԱՆՍՏԱՆ. Լահոռէ կը գրուի թէ ինքնակոչ ռուս «վաճառականներ» տարւոյս մէջ յաճախակի երեւցած են Աֆղանստանայ մայրաքաղաքին մէջ, և էմիրին պաշտօնակալք ա՛յնչափ ուշադրութիւն կ'ընծայեն այս նորեկներու, որ շատ կը կասկածուի թէ կաշառուած են անոնցմէ։ Դիտելի է սակայն թէ այս ուղեւոր վաճառականք կը մնան որ և է առեւտրով զբաղիլ, ի բաց առեալ ամեն տեսակ տեղեկութիւններ քաղելու գործը, զոր յառաջ կը մղեն ամեն ուղղութեամբք, աշխատելով մանաւանդ իմանալ թէ աֆղան ժողովուրդը տրամադի՞ր է մասնակցիլ զօրաւոր արշաւանքի մը դէպ ի Վերին Հնդկաստան։—Ռուսք և Անգլիացիք այս միջոցիս շատ բարեկամ կ'երեւին։ Լորտ Տըֆըրին Հնդկաստան կ'երթայ՝ բարեկամական համաձայնութիւն մը հաստատելու Ռուսիոյ հետ Կեդրոնական Ասիոյ կողմէ։ Բայց կը թուի թէ ռուսական լրտեսութիւնը բոլորովին պարապ չի կենար, և ձեռքի տակէ կը գործէ ի նախատեսութիւն այն պարագայի յորում Ռուսիա պարտաւորի թշնամական դիրք մը բռնել Անգլիոյ դէմ։ Յայտնի է թէ յայնժամ Ռուսաց կողմէ Անգլիացւոց դէմ մեծագոյն հարուածը պիտի լինի Աֆղանաց հետ դաշնակցութեամբ արշաւանք մ'ընել դէպ ի Հնդկաստան։

ԻՏԱԼԻԱ. Նոյէ Ֆրայէ Բրէսէ լրագրոյ թղթակիցը կը գրէ Քաղանիոյ (ի Սիկիլիա) աղէտին վրայ. «Երեկոյեան դէմ ծանրախուռն սեւաթոյր ամպեր կը տարուբերէին Էտնա լերան վրայ, և ահա՛ ծովը, արդէն փրփրադէզ, կատաղի ալեկոծութեամբ մը մռնչել սկսաւ յանկարծ։ Քառորդ ժամ յետոյ կը սկսէր իջնել ա՛յնպիսի յորդահոս տեղատարափ մը, որ մարդ չէր կրնար կանգուն մ'անդին տեսնել։ Սաստկաշունչ հովը կ'առնէր չարաչուք, և ամեն ինչ կ'աւլէր կը տանէր իւր առջեւէ։ Սարսափելի օր մ'էր, որ սարսուռ կ'ազդէր ամենէն քաջարի բնակիչներուն իսկ, մինչ կանայք ի ծունր կ'իջնէին աղօթելու անո՛նց համար որք բաց դաշտին մէջ այսպիսի փոթորկի մը բռնուելու դժբաղդութիւնն ունեցած էին։ Այլ դեռ ո՛չ ոք կը մտաբերէր թէ ո՛րպիսի աղէտներ ահարկու փոթորիկը պիտի բերէր կղզւոյն վրայ։ Հազիւ թէ մրրիկը խաղաղիլ սկսաւ, սուրհանդակ մ'եկաւ Քաղաքապետութեան՝ գուժելով աղեխարշ լուրը թէ Ջիպալի, Պորկօ, Կուարտիա և Օկնինա կոչուած շրջակայ գիւղեր բոլորովին կործանած են անձրեւին և հովին սաստկութեամբ, որք կազմած էին թայֆուն մը. հարիւրաւոր բնակիչք թաղուած են փլած տանց ներքեւ, և արտերն, այգիներն և չագանակի անտառը բնաջինջ եղած են։ Շուտով յայտնուեցաւ թէ այս առաջին լուրեր տխուր իրականութեան մէկ մասը միայն կը ծանուցանէին։ Բազում հոյաշէն ամբարանոցք աւերակաց չեղջակոյտ մը դարձած էին. կործանուած ամբողջ գիւղերու դիրքը միայն կ'որոշուէր աղիւսի և կղմինտրի դէզերէն, և ո՛չ մէկ բնակարան կանգուն կը տեսնուէր։ Փլատակաց ներքեւէն լսելի կը լինէին կենդանւոյն թաղուած դժբախտներու ճիչերն ու աղաղակներն։ Որք ազատած էին ամենակուլ թայֆունէն, գերմարդկային ճգամբք ջանադիր եղան փրկել իրենց նմանները, փլատակները մէկդի ընելով խռնելով, և յաջողեցան շատեր կորզել մահուան ճիրաններէն։ Բայց հետզհետէ դիակներ կը հանուէին, որոց ճիշդ թիւը չծանուցուեցաւ տակաւին։ Իսկ նիւթական կորուստը կը հասնի հինգ միլիոն ֆրանքի։ Վերջին երկու տարւոյ մէջ Իտալիա թատր եղաւ իրարմէ աւելի աղետաբեր պատահարներու։ Նախ ողողմունք, ապա Քազամիչիոլայի և Իսքիոյ երկրաշարժն, յետոյ հնտախտն, և ահա՛ այժմ թայֆունական կործանմունք և խորտակմունք ի Քաղանիա։»

—Իտալիոյ բանտերուն մէջ կան, ըստ նոր վիճակագրոյ մը, 5,363 անձինք՝ ցկեանս շղթայակապ աշխատութեան դատապարտեալ։ Տարեկան ելմտացոյցին մէջ 33 միլիոն ֆր. նշանակուած է այս հաստատութեանց պահպանման ծախուց համար, մինչ դաստիարակութեան համար նշանակեալ գումարն իսկ 30 միլիոնը չանցնիր։

ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ. Լոնտոնի Հնդկային Պաշտօնատան վիճակագիր պաշտօնեայն՝ Պ. Զարլզ Բրինէլ՝ պատրաստած է Հնդկաստանի ելեւմտից վրայ վիճակագիր մը, յորում կը գտնենք սպառապացոյց մը Հնդկաստանի հարստացման վերջին տասն տարւոյ մէջ։ 1874 էն ցի 1883 տասն տարւոյ միջոցին 25 միլիոն 734,092 անգլ. ոսկւոյ արժէքով ոսկեղէն դրամ և 74 միլիոն 768,086 ոսկւոյ արծաթեղէն դրամ մտած է Հնդկաստան, և նոյն միջոցին դուրս հանուած է 5 միլիոն 972,923 ոսկւոյ արժէքով ոսկեղէն և 15 միլիոն 607,210 ոսկւոյ արծաթեղէն դրամ։ Հետեւապէս, նոյն տասնամեայ միջոցին, 19 միլիոն 761,169 ոսկւոյ արժէքով ոսկեղէն դրամ և 59 միլիոն 160,876 ոսկւոյ արծաթեղէն դրամ եղած է Հնդկաստանի սեփականութիւնը, կամ ուրիշ խօսքով, 1874 ին ունեցած դրամոց վրայ Հնդկաստան 1883 ին աւելցուցած է 78 միլիոն 922,045 անգլ. ոսկի ևս։ Ոսկւոյ գործածութիւնը մանաւանդ աւելցած է ի Հնդկաստան, և այս իսկ կը համարուի նոր և գոհացուցիչ նշան մը արեւելեան երկրի մը տնտեսական բարգաւաճման։ Գալով լոկ վաճառաց առեւտրոյն, (այսինքն՝ ոսկեղէն և արծաթեղէն դրամոց ներմուծումը կամ արտածումն ի բաց թողլով,) կը տեսնենք թէ 1883 ին Հնդկաստան ներմուծեալ վաճառաց արժէքն էր 50,003,041 անգլ. ոսկի, մինչ տասն տարի առաջ միայն 31,628,497 ոսկի էր։ 1883 ին արտածեալ վաճառաց արժէքն էր 83,400,865 ոսկի, մինչ 1874 ին 54,960,736 ոսկի էր միայն։ Դուրս հանուած վաճառաց քանակութեան աճումը նշանակելի է, մանաւանդ յիշելով թէ Հնդկաստանի վաճառականութեան կարեւորագոյն առարկաներէն մին՝ ափիոնի՝ մշակումն և արտածումը դիտմամբ սեղմուած և սահմանափակուած են։ 1881 ին համայն Հնդկաստանի մէջ կային միայն 77,188 բրիտանածին արու Անգլիացիք ամեն դասէ։

ՊՐՈՒՆՍՎԻՔԻ [illegible] դատ մը. Պրունսվիքի Դքսութեան Գերագոյն Ատեանն այս օրերս վերջնական վճիռ տուաւ նմանը չտեսնուած կերպիւ երկարատեւ դատի մը մէջ։ Ստոլպերկի կոմսը կը պահանջէր Պլաքէնպուրկի գաւառակն իւր կալուածներով, զորս գրաւած է Պրունսվիքի կառավարութիւնն։ Այս կալուածոց այժմեան արժէքը կը հաշուի քանի մը հարիւր հազար ոսկի։ Առաջին անգամ 1604 ին էր որ Ստոլպերկի կոմսին նախահայրն այս պահանջումը ներկայած էր Վիէննայի Կայսերական Ատենին, որ գերագոյն ատեան մ'էր գերմանական կայսրութեան վեհապետ իշխանաց միջեւ ծագող վէճերը քննելու համար։ Դատը շատ երեւոյթներէ անցնելով, 1649 ին վճիռ մը տրուեցաւ, որ չգործադրուած մնաց։ Յետոյ յիշեալ աւատական հողն իւր յարակից կալուածներով անցաւ Պրունսվիքի Դքսերուն։ Ստոլպերկի այժմեան կոմսը կ'ուզէր վերակենդանացնել իւր հարց դատն, և ստանալ Պլաքէնպուրկի կոմսութեան տիտղոսն ու կալուածները. բայց Գերագոյն Ատեանը ժխտական վճիռ մը արտասանեց վերջնապէս։

(*). Երբ խնդիրը դրամի վրայ է, օրէնք է որ Վեհապետը խօսքը միայն Երեսփոխանական ժողովոյ անդամոց ուղղէ. զի Լորտերու ժողովը բնաւ իրաւասութիւն չունի Ելմտացոյցի որոշման վրայ։

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

)(65)(

ՖՈՐՏՈՒՆԷ ՏԻՒ ՊՈՒԱԿՈՊԷ

ՊԱՐՈՆ ԼԸՔՈՔԻ ԾԵՐՈՒԹԻՒՆԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՊԱՐՈՆ ԼԸՔՈՔ ԻՆՔԶԻՆՔ ԿԸ ԾԱԾԿԷ

ԺԲ.

Ըստ իրենց դատողութեան՝ այդ գեղեցիկ երիտասարդ չէր խոնարհեր ըստ բաւականի։ Կ'ուզէին որ լար։

Բայց զայն մեղադրողները թէ իւր վիճակին սարսափելի ծանրութիւնը չէր զգար, եթէ կարենային անոր սրտին մէջ կարդալ, աւելի ներողամտութիւն կ'ունենային։

Տարաբաղդ երիտասարդը նոյն միջոցին իսկ սոսկալի տանջանք կը կրէր, և գերմարդկային ճիգեր կ'ընէր իւր տագնապը ծածկելու։

Ոչ թէ կառափնարանէ կը վախնար, այլ այն չարչարանքէ՝ զոր դատավարական սովորութիւնք պիտի տային իրեն վատանունութեան նստարանին վրայ։

Գիտէր որ Թէրէզ վկայութեան կոչուած էր, գիտէր որ զինքը կորացած պիտի տեսնէր ցասուցեալ ամբաստանչի մ'անգորուն խօսքերուն ներքեւ, և իւր պատասխանները պիտի լսէր դատաւորի մը հարցմանց, որ մարդասպանի մը հետ ակնածութեամբ վարուելու պէտք չպիտի զգար։

Կը գուշակէր մանաւանդ թէ դատաւորն իրենց սիրոյն վրայ, սոսկալի չարաբաստութեամբ խզուած ամուսնութեան վրայ պիտի խօսէր, իւր բերնէն խոստովանութիւն մը քաղելու համար իւր փղձկեալ նշանածը պիտի ցուցնէր իրեն, և սիրտը կը մորմոքէր խորհելով թէ յակամայից դառն տանջանք պիտի պատճառէր այն դժբաղդ աղջկան, զոր տակաւին կը սիրէր նոյն բուռն սիրով որով սիրած էր այն օրն ուր միմեանց հետ ի սպառ մնալ ուխտած էին փոխադարձաբար։

Մազասի ցուրտ խցիկներէն միոյն մէջ կրած երկար բանտարկութեան միջոցին՝ Թէրէզի պատկերը չէր դադրած իւր մտքին առջեւ ներկայ գտնուելէ։ Հանապազ զայն կ'երազէր, և անդառնալի կերպիւ թռած երջանկութեան դառն յիշատակը գիշեր ցերեկ կը խոշտանգէր զայն։

Քանի՛ քանի անգամ մեռնելու փափաքեր էր դատաստանի ծանականքը չկրելու համար։ Քանի՛ քանի անգամ ըսեր էր ինքնիրեն թէ իւր նշանածը սոսկում և արհամարհանք միայն կրնար զգալ իւր վրայ։

Երեք ամիս ի վեր բացարձակ առանձնութեան մէջ կ'ապրէր։ Մարդ տեսնելու արգելքն ոճրադատ ատենին գումարումէն ութ օր առաջ վերցած էր։

Համբին փախստեան վրայ զայն հարցաքննած ժամանակ՝ քննիչ դատաւորը պարտաւորուեր էր իմացնել անոր թէ հայր Լըքոք աներեւոյթ եղած էր, և թէ կասկած կար թէ նա նպաստած էր Համբին փախստեան։

Բայց երբոր Լուի լուր հարցուցեր էր օրիորդ Լըքընթի վրայ, երբոր թոյլտուութիւն խնդրեր էր նամակ մ'անոր գրելու, պատասխան տրուեր էր թէ անհնարին էր, վասն զի վկայութեան կոչուած էր. հետեւաբար բնաւ լուր չունէր անոր վրայ։

Ամեն բան կրեր էր անտրտունջ։ Յուսահատութիւնն առաւել կը գրգռէր անոր կորովը. ամեն բան աչքն առած էր. ամեն բանի պատրաստ էր. և եթէ կ'ուզէր մինչեւ ցվերջ մաքառիլ, պատճառն այս էր որ, համոզմամբ մը զօրացեալ, պատւոյ խնդիր կը համարէր պարտութիւն չխոստովանիլ՝ մինչեւ իսկ մահուան դատակնիքը լսելէ յետոյ։

Ուստի իւր դատաստանին մէջ՝ բերդի մը վրայ յարձակող և մեռնելուն վրայ աներկբայ եղող զօրականի մը համբերատար քաջասրտութիւնը կը բերէր։

Հետեւաբար՝ դէմքին վրայ տեսնուած խրոխտութիւնն, որ այդ քաջասրտութեան արդիւնքն էր, զարմանք և դժգոհութիւն կը պատճառէր ներկայ գտնուողներուն։

Սակայն կանայք թշնամի չէին իրեն։ Կ'ենթադրէին թէ բուռն կիրքեր այդ ոճրին առաջնորդած էին զայն, և սիրած լինելն ի հաշիւ կ'առնուէին։

Թերեւս նուազ ներողամիտ կը լինէին եթէ տգեղ լինէր. բայց Լուի Լըքոք իւր ֆիզիքական առաւելութիւններէն բան մը չէր կորուսած բանտին մէջ։ Տժգունութիւնն առաւել կը փայլեցնէր դէմքին բնական ազնուութիւնն, և այն կապուտակ ախօս, զոր վշտակրութիւնը պեղած էր աչքին կոպերուն տակ, առաւել ևս կը ցայտեցնէր սեւ խոշոր աչերուն գեղեցկութիւնն։

Երդուեալ դատաւորաց և ատենակալաց ներս մտնելէն առաջ քանի մը վայրկեան անցան, որոց միջոցին բազմութիւնը չդանդաղեցաւ իւր զգացած տպաւորութիւնն յայտնել հծծելով, որոյ շշունջը բնաւ չփոթեց ամբաստանեալն, որ անզգած էր միշտ։

Դէմքն ոչ ևս կը տեսնէին, բայց ատենասրահին մէջ տեղը մեծ սեղանի մը վրայ դրուած ապացուցական նիւթերը կը ցուցնէին միմեանց։ Այն նիւթոց մէջ կային արդարեւ բաներ, որք տեսնելու արժանի էին։

Սեւցած կլոր պողպատէ ծայրով գաւազանի մը քով, որ ամբաստանութեան խօսքին նայելով՝ Պ. Լէօրէյի սպանման ծառայած էր, գաճէ կաղապարներ կը տեսնուէին, որք ոճրագործութեան գիշերը պարտէն ձիւներուն վրայէն քալող ոտքերուն ճիշդ ձեւն հանած էին։

Բիչ մ'անդին կը տեսնուէին փղոսկրէ երախակալով դաշոյնն և Սլաքի տիկինը՝ զոր ոճրագործը զոհին սրտին վրայ գամած էր, փոքրիկ սեղանն՝ որոյ վրայ բացուած էր ամբաստանեալոյն տան մէջ գտնուած [illegible], արեան բիծեր ունեցող ժանեկազարդ սենեկազգեստը, վարդագոյն մուճակներն և թառամեալ կամելիան։

Բայց ամենէն աւելի ուշադրութիւն գրաւողն էր մեղրամոմէ կիսարձանն այն տարաբաղդ կնոջ, զոր անդ գտնուողներէն շատեր դիակնարանին մէջ տեսած լինելնին կը յիշէին։

Կիսարձանն սքանչելի նմանութիւն մ'ունէր, և ա՛յնչափ ճարտարութեամբ կաղապարուած էր, որ կարծես թէ այն վաղեմի մոմագործ վարպետներուն միոյն ձեռքէն ելած էր, որոց արհեստն, յոյժ ծաղկեալ եօթնևտասներորդ դարու մէջ, այժմ բոլորովին լքեալ է։

Արդիւնքն հիանալի էր, բայց դատական իշխանութիւնն հետաքրքիր դեղուհեաց սիրտը շարժելու համար չէր որ այն հրաշակերտն ի ցոյց դրած էր, այլ կը յուսար որ սպանելոյն անձնաւորութիւնը ճանչելու կրնար ծառայել, որովհետեւ տակաւին չէր ճանչուած։

Դիպուածը կրնար ունկնդրութեան բերել օտարազգի մը, անգլիացի մը. և որովհետեւ անգլուհի լինելն ստուգուած էր, կը յուսացուէր որ կրնար պատահիլ այն միջադէպերէն մին, որ՝ ինչպէս կ'ըսեն՝ թատրոնի մը սրահը կը յափշտակեն։

Եւ իրօք, հասարակութեան մեծ մասին համար, եղեռնադատ ատեան մը թատրոնէ տարբերութիւն չունի։

Միայն թէ, այս պարագայի մէջ, հանգոյցին լուծումն ուրիշ ներկայացման մը կը յղուի, այսինքն երդուեալ դատաւորաց մէկ ուրիշ մօտաւոր նստին. և կային մարդիկ որք յատկապէս եկած էին ջահերով արտասանուած մահուան դատակնքոյ մ'ազդեցութիւնը տեսնելու։

Անոնք կը մաղթէին որ Լուի Լըքոք նոյն նստին մէջ ի մահ դատապարտուէր։

Ամեն օր առիթ չներկայանար գեղեցիկ և վայելչաշուք երիտասարդի մ'այլագունիլն ու դողդողիլը տեսնելու, երբոր դատաւոր մը, յուզեալ սրտիւ, ինչպէս որ կը վայլէ, պատժական օրինաց 302 րդ. սարսափելի յօդուածը կարդայ։

Գլխաւորապէս կանայք կը փափաքէին որ այս հաճոյական տեսարանէն բան մը չկորսնցնէին։

Երկար չսպասեցին վարագուրին բացման։

Բարապան մը ծանոյց. Ատենակա՛լք։

Եւ ահա ներս մտան ատենակալք։

Երդուեալ դատաւորք նստան. լռութիւն տիրեց, խոր լռութիւն մը, որ տեսարանին ահարկութիւնը կ'աւելցնէր։

—Ամբաստանեա՛լ, ոտքի վրայ ելէք, ըսաւ Նախագահն։

Ամբաստանեալն արդէն ոտքի վրայ էր, ուղղաբերձ և բարձրագլուխ կանգնած։

—Ի՞նչ է ձեր անունը։

—Լուի-Ալպէր Լըքոք։

—Դուք շատ անգամ ուրիշ անուն մ'ալ առած էք, զոր իրաւունք չունէիք գործածելու։

—Հայրս այն անունով ճանչուած էր։

—Այնպէս թող լինի, անցնի՛նք։ Ձեր տարի՞քը։

—Քսանեւութ։

—Ո՞ւր ծնած էք։

—Փարիզ։

—Ձեր արհե՞ստը։

—Տօքթէօռ իրաւաբանութեան։

—Ձեր վրայ ամբաստանութիւն կայ թէ վերջին յունուար ամսոյ մէջ երկու սպանութիւն գործած էք։

Նստէ՛ք և ուշադրութեամբ ունկն դրէք ամբաստանագրին ընթերցման։

Լուի Լըքոք հնազանդեցաւ, և ատենադպիրն սկսաւ յստակ ձայնիւ կարդալ խեղճ Թէրէզի նշանածին վրայ ծանրացած սարսափելի ամբաստանութեանց հետեւեալ տեղեկագիրը.

(Շարունակելի)

— Պրունսվիքի հանգուցեալ Դուքսն իւր բոլոր պատրաստ դրամը թողած է Քումպէրլանտի Դքսին՝ Հանովրի գահազուրկ թագաւորին որդւոյն ։ Պատրաստ դրամին քանակութիւնը մինչեւ 100 միլիոն թալէր (15,000,000 անգլ. ոսկի) ենթադրողներ կան ։ Իւր կալուածոց մէկ մասն աւատական լինելով, Բրուսիոյ թագաւորութեան անցած է ։ Բայց գերմանական կառավարութեան ընթացքէն կ'երեւի թէ բոլոր Դքսութիւնն իսկ՝ իւր վեհապետական իշխանութեամբ՝ պիտի դադրի գոյութիւն ունենալէ այլ եւս ․ զի Քումպէրլանտի Դուքսը՝ միակ ժառանգ՝ չի ճանչնար զգերմանական Կայսրութիւնն, և Պերլինի կէս–պաշտօնական լրագիրք կ'ըսեն որ մինչեւ իսկ եթէ ճանչնայ, կայսերական կառավարութիւնը չի կրնար հաւանիլ որ Գերմանիոյ վեհապետ իշխանաց կարգը մտնէ Դուքս մը, որ այնպիսի հակակիր զգացումներ կը սնուցանէ ընդդէմ Նորահաստատ Կայսրութեան ։

ԱՆԳԼԻԱ ԵՒ ԵԳԻՊՏՈՍ ․ Խտիվին կառավարութեան առարկութեանց վրայ, եգիպտական բանակը բոլորովին ջնջելու մասին Լորտ Նորթպրուքի ծրագիրը թողուած է, և որոշուած է միայն որ այդ բանակ 3,000 զօրքի վերածուի ։ Հետեւապէս, բանակին ծախքը տարին 150,000 ոսկւոյ միայն պիտի հասնի ։ Ոստիկանութեան ծախքն ալ տարին 200,000 ոսկւոյ պիտի իջնէ, թէև 1,200 հոգի պիտի աւելնան ոստիկանութեան վրայ ։ — Իտալական պատուիրակն ո՛չ միայն ետ չէ կեցած Նուպար փաշայի դէմ բացուած դատէն, այլ Իտալիայէն վերադառնալու առթիւ յայտարարած է նաեւ թէ կը մասնակցի ֆրանսացի և աւստրացի պատուիրակաց յարուցած դատին ։ — Գլխավճարի դադարման միջոցին եգիպտական գանձուն վճարուած գումարն է 300,000 անգլ. ոսկի ։ — Վատի–Հալֆայէ կը հեռագրուի թէ Լորտ Ուոլսլի հրամատարութեամբ անգլ. ազատիչ զօրախումբը Սուտան երթալու համար թէ՛ ցամաքի և թէ՛ Նեղոսի ճամբով յառաջ պիտի խաղայ նոյ. ի առաջին շաբթուն մէջ ։

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՔ ․ Երկու հարուստ Ամերիկացիք, մին Նիւ-Եորք Հէրըլտի Տնօրէն Պ. Պէնէթ, և միւսը Պ. Մաքէյ, իրենց անձնական ծախիւք հաստատեցին հեռագրոյ ընդծովեայ պարան մ'ընդ մէջ Իռլանտայի (հիւսիսային ծայր Եւրոպիոյ) և Նիւ Եորքի ։ Անցեալ շաբաթ այս նոր հեռագրոյ միջոցաւ հաղորդակցութիւնք սկսան Ամերիկայի և Եւրոպիոյ միջեւ ։ —Նախագահ Պ. Արթիւր, որոյ պաշտօնավարութեան քառամեայ պայմանաժամը կը լրանայ առաջիկայ մարտին, պարապ միջոց ունենալով այլ եւս, նշանուած է իւր արտաքին գործոց նախարար Պ. Ֆրիլինկհիւզէնի աղջկան հետ, և պիտի ամուսնանայ երբ թողու նախագահական պաշտօնն ։ Ամերիկացիք յոյժ գործնական մարդիկ են ամեն աստիճանի ու պաշտօնի մէջ ։

ԱՆԳԼԻԱ ․ Հեռագիրն անցեալ օր համառօտիւ ծանոյց ամբոխին մէկ ցոյցն ընդդէմ լորտ Սալիսպըրիի ։ Լորտ Սալիսպըրի Տէմֆրիս գնացած էր Պահպանողականաց մէկ գումարման նախագահելու ։ Սոուարաթիւ ամբոխ մը, յորում տղայք և երիտասարդք մեծամասնութիւն կը կազմէին, Պահպանողականաց Պետին ետեւէ գնաց մինչեւ միթինկին տեղը, սուլելով և անարգական աղաղակներով ։ Միթինկին սկիզբէն մինչեւ վերջին ամբոխը անհանութեան ցոյցեր կ'ընէր բարձրաձայն ․ և քիչ մնաց որ Պիրմինկէմի մէջ եղածին նման՝ արշաւէր միթինկի շրջափակէն ներս, և կռուի բռնուէր պահպանողական ունկնդրաց հետ ։ Երբ դուրս ելաւ լորտ Սալիսպըրի, նոյն տեսարանք աւելի սաստկացան ։ Այս անգամ քարեր ալ արձակուեցան ազնուական Լորտին կառքին վրայ ։ Ոստիկանութիւնն անկարող էր վերջ մը տալու այս անկարգութեան, որ դադրեցաւ երբ զԼորտ Սալիսպըրի տանող կառախումբը ճամբայ ելաւ դէպ ի Լոնտոն ։ Բարեբախտապէս, մարդ չվիրաւորեցաւ այս անգամ ։ — Պ. Կլատսթոն նամակաւ մը կը պարսաւէ ամբոխին այս ցոյցերն, և կը պատուիրէ որ երկու կողմերն հանդարտօրէն լսեն իրարու փաստերը ․ զի այս կերպիւ, կ'ըսէ, [illegible] խնդիրն աւելի զօրեղապէս պիտի պաշտպանուի ։

ՌՈՒՍԻԱ ․ Պետերսպուրկ, 19 Հոկտ. առ Թայմզ ․ «Ամու Տարիա գետին վրայ շոգենաւեր բանեցնելու որոշում տրուեցաւ, և երբեմն Արալի նաւախմբին պատկանող Սամարղանտ և Թաշքէնտ շոգենաւերը պիտի գնուին՝ առաջին ուղեւորութիւնն ընելու համար ։ Հայ լրագիրք գիտել կուտան թէ, Կովկասիոյ ճամբով վաճառաց փոխանցման արգելումէն ի վեր, օտար վաճառքներ, մանաւանդ շաքար, Պարսկաստան կը ղըրկուին Պարսկաց ծոցին մէջ Պէնտէր Աբպասի ճամբով, ի վնաս Ռուսիոյ, ուրուն հետեւապէս բնաւ օգուտ չպիտի բերէ [illegible] դադարումը ։ »

—Շաքարագործութիւնն երթալով Ռուսիոյ մէջ զարգանալու վրայ է, ինչպէս կը տեսնուի ելմտական պաշտօնատան տուած տեղեկութիւնէն ․ 1883–84, բոլոր գործարանաց մէջ 18 միլիոն փութ շաքար գտնուած է ։ (մէկ փութ 13 օխա է ։)—Նիժնի–Նովկորոտի մէջ սկսուած է անցեալները Հրէից վրայ յարձակողաց դատն, որ ներքին գործոց նախարարութեան հրամանաւ դռնփակ կը լինի ․ ամբաստանեալք են 72 անձինք և վկայք 197 ։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Պատրիարքական առժամեայ տեղապահի մը ընտրութեան համար, Ամեն. Ս. Պատրիարք Հօր կարծիքն առնլու պաշտօնով ընտրեալ պատգամաւորութիւնն երէկ չկրցաւ երթալ առ Նորին Բարձր. Սրբազնութիւնն, պատգամաւորութեան անդամոց միոյն բացակայութեան պատճառաւ ։ Ուստի պատգամաւորութիւնն որոշած է՝ վաղ առաւօտ երթալ կատարել իւր պաշտօնը ։

Լիայոյս ենք որ պատուարժան պատգամաւորութիւնը որոյ ձեռնհասութիւնը ծանօթ է, ի նկատի առնելով այն փափուկ կացութիւնը յորում կը գտնուինք, և այն բազմադիմի նկատողութիւններ որք իրենց տեսութենէ չեն վրիպիր, կարող պիտի լինի Սրբազան Պատրիարքի հետ համախոհութեամբ յանգիլ այնպիսի որոշման մը որ գոհունակութեան պատճառ է ընդհանուր ազգին ։

Այդ յոյսը կրնանք ունենալ այնպիսի պատգամաւորութենէ մը յորում կը գտնուին Ազգային պաշտօնէութեան առաջին ներկայացուցիչներ ։ Ազգային Ժողովոյ Վսեմ. Ատենապետ էֆէնտի, Կրօն. Ժողովոյ Ատենապետ Գեր. Սրբազանը և Իւր Գեր. ընկերակիցք, Քաղ. Ժողովոյ Վսեմ. Ատենապետ պէյն, առաւել քան զայլ ոք գիտակ են ազգային գործոց վիճակին և վերահասու այն պայմաններուն, որք անհրաժեշտ են ազգային գործոց բարւոք վարչութեան համար ։

Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, շաբաթ օրն իւր անուան տարեդարձին առթիւ բազմաթիւ այցելու ընդունելուն պատճառաւ, երկու օր հետէ փոքր ինչ անհանգիստ է ։

Կրօնական Ժողովն գումարուեցաւ երէկ ընդ ատենապետութեամբ Գեր. Տ. Խորէն Արքեպիսկոպոսի Նար–Պէյ, և հանրային խնդրովք զբաղեցաւ ։

1. — Ժողովն լսելով որ Պուքրէշի Տ. Միքայէլ քահանայն փախեր է մայրաքաղաքէս, որոշեց հեռագրել առ Հոգաբարձութիւն Պուքրէշի, թէ Տ. Միքայէլ այդր եկա՞ւ, թէ կախակայեալ է նա ի քահանայագործութենէ, ծանուցանել Ռումանիոյ և բոլոր Հայ հասարակութեան, և ի Պատրիարքարան պատասխանել անյապաղ ։

2. — Տնտեսական խորհուրդն 10 Օսմ. ոսկի յատկացուցած լինելով Եաննա երթալիք եկեղեցականին ծախուց համար, Ժողովն որոշեց որ Զաքարիա վարդապետ՝ երբեմն միաբան Ս. Երուսաղէմի, Սելանիկ և Եաննա երթայ, պանդուխտ ժողովուրդը հոգեւոր մատակարարութեամբ մխիթարէ, և ի դարձին տեղեկագրէ առ Ժողովն՝ նոյն ազգայնոց վիճակը ։

3. — Ժողովն իւր Ներքին կանոնադրութիւնն, զոր դիւանը պատրաստած էր, տեսնելով՝ որոշեց յառաջիկայ նստին վաւերացնել յետ դիտողութեանց ։

4. — Մխացուցներու կարգաւորման համար հարկ եղած նոր հրահանգներ տրուեցան յատկապէս կարգեալ յանձնախմբին ։

5. — Բանի մը եկեղեցականներու դիտողութեանց վրայ, որ առ Ժողովն բրած էին, որոշուեցաւ որ այսուհետեւ քահանայք և աւագերէցք առ հասարակ ի հանդիսի յուղարկաւորութեան ննջեցելոց, միայն փորուրար առնուն, և ոչ շուրջառ ։

Ժողովն Կիւրինցի Տ. Խորէնի կրօնագիտութեան դրքուկին քննութեամբ եւս զբաղելէ յետոյ՝ ատեանը փակեց ժամը 11ին, յաջորդ նստին միայն մասնաւոր խնդրովք զբաղելու որոշմամբ ։

Տփղիսէն մեզ կը գրեն ․

«Տեղւոյս ազգայնոց այն ոգեւորութիւնը չմնաց զոր ցոյց կը տային վերջի կաթողիկոսական ընտրութեան ժամանակ ։ Ներսէսեանք յուսահատած են և չեն գտնար ուրիշ ընտրելի ։ Միւս կողմէ Կառավարութիւնն ազգային դպրոցներու մասին տուած հրամանին գործադրութիւնը խստիւ կը պահանջէ, ուրուն համար կը լսեմ թէ Սինոդէն պատգամաւորութիւն մը կը պատրաստուի եղեր գալու և Կովկասի փոխարքայ Տոնտուքոֆ իշխանէն խնդրելու, որպէս զի այս դպրոցական խնդիր առ այժմ յետաձգուի մինչ ընտրութիւն կաթողիկոսի ։ Չենք գիտեր թէ ո՛ր աստիճան ստոյգ է այս լուր »։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՆՈՒՑՈՒՄ

Ազգային Տնտեսական Խորհրդոյ

Իւսկիւտար Նոր Թաղի մէջ հաստատեալ Բարեգործական ընկերութեան երկամեայ հաշուեցոյցն՝ որ կ'սկսէր 1882 ապրիլ 18է և կը յանգէր ցվերջ ապրիլի 1884 տարւոյ, ըստ օրինի Տնտեսական խորհրդոյ ներկայացուած, և անոր յար և նման մէկ օրինակն յիշեալ Թաղի եկեղեցւոյ բակին ի տես Թաղեցւոց կախուած է ։

Տնտեսական խորհուրդն այսու պաշտօնական ծանուցմամբ հրաւէր կը կարդայ Պատուարժան Թաղեցւոց, որ յիշեալ հաշուեցոյցին վրայ որ եւ է բողոք կամ դիտողութիւն եթէ ունին, Թուականէս մինչեւ 21 օր գրաւոր կերպիւ ներկայացնեն Տնտեսական խորհրդոյ ։

Հետեւապէս, սոյն պայմանաժամին լրումէն յետոյ որ եւ է բողոք կամ դիտողութիւն անլսելի պիտի մնայ ։

11 Հոկտ. 1884, Կ. Պոլիս

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պալատի աստիճան տրուեցաւ՝ Ռուսումաթի վերատեսչի խորհրդական Պէրթրամ էֆէնտիի ։

Երրորդ աստիճանի Օսմանիյէ՝ Աֆիոն–Գարահիսարի կառավարիչ Իպրահիմ Ֆարիմ պէյի ։

Երրորդ աստիճանի Մէճիտիյէ՝ Ռուսիոյ սպայակոյտէն գնդապետ Չիչաքոֆի, Հաղորդ Բարոնեանցն Խալիլ Իսրայէլ էֆէնտիի, և Հաղորդ Մետրապոլիտ Փիրմանոս էֆէնտիի ։

Հինգերորդ աստիճանի Մէճիտիյէ՝ մայրաքաղաքիս անգղիական հիւպատոսարանի թարգման Իլիա էֆէնտիի ։

Նախարարաց խորհուրդն իւր չորեքշաբթի աւուր նստին մէջ որոշած է մերժել Պ. Հիրշի հակառաջարկներն և հրաւիրել զինքն որ ընդունի Բ. Դրան նախկին առաջարկները զորս Պ. Հիրշ կը մերժէ ։ Բ. Դուռը պաշտօնապէս հաղորդած է սոյն որոշումն Աւստրիական դեսպանին և ծանուցած է Ն. Վսեմութեան որ, եթէ Պ. Հիրշ չհամակերպի Բ. Դրան կողմէ նախապէս ներկայացեալ առաջարկներուն, օսմանեան կառավարութիւնը միացման գծերու շինութեան պիտի ձեռնարկէ ուրիշի մը միջոցաւ կամ իբր մենաշնորհ յանձնելով գործն ։

Մայրաքաղաքիս Պարսկական դեսպանը շաբաթ գիշեր կայսերական պալատան մէջ ընթրեց յատուկ հրաւիրանօք Նորին վեհափառութեան, և յետ ընթրեաց՝ իւր խորհրդականին հետ Օգոստ. Սուլթանին ներկայանալով՝ մինչեւ ժամը 5½ խօսակցելու պատիւ ունեցաւ, և ապա Սթէնիա վերադարձաւ կայսերական թիկնապահի մը և չորս չավուշներու հետ ։

Արտաքին գործոց պաշտօնատան Ներկայացուցչի օգնական Ղալիպ պէյ նախընթաց օրը հոլանտական դեսպանատունն երթալով՝ ի դիմաց կայսերական կառավարութեան շնորհաւորեց նորեկ դեսպանն ։ Երէկ Բ. Դուռն երթալով դեսպանը՝ տեսակցեցաւ մեծ Եպարքոսին և արտաքին գործոց նախարարին հետ ։ Օգոստ. Սուլթանին պիտի ներկայանայ առաջիկայ շաբթու մէջ ։

Կայսերական լեզուաբանական վարժարանի հարցաքննութիւնք սկսան երէկ ։

Սթանքէօյի կայսերական շոգենաւուն հրամանատար Փօլ–աղասը Իզզէթ էֆէնտիի հազարապետութեան աստիճան տրուեր է ։

Տպարանաց նոր օրինաց ծրագրոյ քննիչ յանձնաժողովն երէկ եւս նիստ ընելով լրագրական վերատեսուչ Մէհմէտ պէյի նախագահութեամբ, երկար ժամանակ խորհրդակցեցաւ ։

Օգոստ. Սուլթանին թիկնապահներէն Հօպ փաշա արձակուրդով Պրուսա գնաց տիկնոջն հետ ։

Կ. Պոլսոյ Ֆրանսական ընդհանուր հիւպատոս Պ. Կաղէյ՝ Ռուսական վերջին շոգենաւով Իզմիր ուղեւորեցաւ, տեղւոյն Ֆրանսական հիւպատոսին յանկարծական մահուան պատճառաւ ։ Պ. Կաղէյ կը վերադառնայ քիչ օրէն ։

Հանրային պարտուց վարչութեան Ֆրանսական պատուիրակ և Նախորդ Նախագահ Պ. Օպարէ վաղը Բարիզ կ'ուղեւորի արձակուրդով, ուր պիտի մնայ մինչեւ առաջիկայ գարուն ։

Միտիլլէն կը ծանուցուի թէ մեծամեծ պատրաստութիւնք կը լինին Նորընտիր կառավարիչ Ահմէտ էֆէնտին արժանավայել պատուով ընդունելու համար ։ Յաղթական կամարներ կանգնուած են և համայն ժողովուրդն համակրական ցոյցեր կը պատրաստէ ։

Ֆէնէրի Պատրիարքարանի վարչական գործերն, որք ժամանակէ մը հետէ առկախ մնացած էին, կանոնաւոր շարունակութեան ճամբուն մէջ կ'սկսին մտնել ։ Պատրիարքարանի առաջին գործը պիտի լինի Ս. Սինոդին և Ազգ. Ժողովոյ անդամոց վերընտրութիւնն ։ Թէեւ սոյն ժողովոց պաշտօնավարութեան պայմանաժամն արդէն իսկ լրացած էր, սակայն նկատելով որ Պատրիարքական աթոռը թափուր էր, խոհեմութիւն համարած էին անոնք չը լքանել գործերն ։

Ֆարի և Սղամպուլի ծանուցեալ բանակռիւներէն յետոյ, որք կ'երեւի թէ վերջ գտան Պ. Բիլիոտքօպուլոյի դատապարտութեամբ, կարգը եկած է այժմ Պ. Համլիի, և Սղամպուլի նախկին խմբագիրներէն Պ. Լա Ժօնքիերի՝ որ այժմ Ժուրնալ տը Քոնսթանթինօբլ կ'աշխատակցի ։ Վերջին օրերս երկու թերթերուն մէջ ալ նախատալից երկար յօդուածներ կը տեսնուին միմեանց դէմ, և ի վերջոյ Սղամպուլի տնօրէն Պ. Համլի՝ Ֆրանսական հիւպատոսարանի առջեւ դատ բացած է Պ. Լա Ժօնքիերի դէմ ։

Ի Լոնտոն բնակեալ Սըր Մովսէս Մօնթէֆիօրէ բարեգործ Հրէին հարիւրամեակին առթիւ, զոր ծանուցինք երէկ, հանդիսաւոր արարողութիւն մը կատարուեցաւ այս կիրակի Եիւքսէք Գալտըրըմի Սինակոկային մէջ ։ Աւստրիացի և գերմանացի հրէայք մեծ բազմութեամբ խռնեալ էին Սինակոկային մէջ և կ'աղօթէին վասն երկարութեան կենաց այդ նշանաւոր ծերունւոյն որ իբր սուրբ մը կը յարգուի իւր ազգակցաց կողմէ ։ Աւստրօ–գերմանական հրէայ հասարակութեան նախագահ Պ. Պրէյթնըր գեղեցիկ բանախօսութիւն մ'ըրաւ, յիշատակելով այս առթիւ այն շնորհներն զորս Օգոստ. Սուլթան Համիտ Կայսրն, Սըր Մովսէսի միջնորդութեամբ, բրած է Թուրքիոյ Հրէից զորս կը հովանաւորէ յատուկ բարեյօժարութեամբ ։

Յաւարտ հանդիսին, Աւստրօ–գերմանական հասարակութիւնն հեռագիր մ'ուղղելով ի Լոնտոն, առ Սըր Մովսէս Մօնթէֆիօրէ, իւր բարեմաղթութիւններն ու շնորհաւորութիւնները մատոյց ։

Գերմանական դեսպան Պ. Ռատովից թողլով իւր ամարանոցը, Բերայի դեսպանատունը փոխադրուած է պաշտօնապէս ։

Ամերիկեան դեսպանատան գործակատար Պ. Հիր եւս Բերայի դեսպանատունը փոխադրեց բնակութիւնը ։

Թէրճէմանը–Հագիգաթ այսօր դըրուատեաց աղաղակներ կը բարձրացնէ Չէրքէսաց մեծամեծներէն Հաճի Խոհագ պէյի համար, ծանուցանելով թէ սա՛ երբ լսեր է թէ Կեսարիոյ Թղթատարութեան կարաւանին զարնուիլն և կողոպտուիլը Չէրքէսաց կը վերագրուի ըստ սովորութեան, ամօթ և նախատինք համարելով Չէրքէս ժողովրդեան՝ կառավարութեան գիր տուեր է թէ ինքը կը վճարէ բոլոր յափշտակեալ դրամն, եթէ հաստատուի՝ աւազակաց մէջ Չէրքէս մ'անգամ գտնուիլը, և միւս կողմանէ ինքն ալ Ապազայից գլխաւորներէն գիր առնլով, նոցա հետ խուզարկութեան ելեր է, և վերջապէս աւազակք գտնելով՝ հաստատուեր է թէ նոցա մէջ բնաւ Չէրքէս չկայ ։

Լրագրական վերատեսչութեան կողմանէ պատուիրուեր է մայրաքաղաքիս յոյն լրագրաց, որ այսուհետեւ չխօսին Յունաց Պատրիարքարանի վիճակին վրայ և թէ՝ պատժոյ պիտի ենթարկին եթէ հակառակ վարուին ։

Առ Սղամպուլ ուղղեալ մասնաւոր հեռագիր մը կը ծանուցանէ թէ երեք Թուրք վաճառականք որք Ադրիանուպոլսոյ մօտ, Ուզուն–քէօփրիւ գնացած էին սեխ գնելու համար, շաբաթ երեկոյ սպանուեր են անծանօթ չարագործաց ձեռամբ ։ Այս վաճառականներէն մին առջի օրն անխոհեմութիւն ըրեր էր ոսկւով լի քսակը ցոյց տալով ոմանց, և կ'երեւի թէ չարագործք հըրապուրուեր են այդ ցոյցէն ։ Սակայն չգոհանալով խեղճերուն մահուամբ, անոնց աչքերը պարպեր են կոպճներով ։

Սղենիայի բացերը խարսխեալ Լէօն անուն հելլենական առագաստանաւու մը երկրորդ նաւապետ Ֆաքօս կենացը վերջ տուեր է Րէվօլվէրի հարուած մը տալով ուղեղին ։ Այս անձնասպանութեան շարժառիթն յայտնի չէ տակաւին ։

Թէրճէմանը–Հագիգաթ կը ծանուցանէ այսօր, թէ այսուհետեւ չպիտի հրատարակէ գաւառներէն առ ինքն ուղղեալ հեռագրերն, առանց հրատարակութեան ծախուց, զանոնք իբրեւ մասնաւոր շահուց վերաբերեալ գըրուածներ համարելով ։

Եանեայէն առնուած նորագոյն տեղեկութիւնք բնաւ բարւոքում մը չեն ծանուցաներ Եպիրոսի վիճակին վրայ ։ Հակառակ տեղական իշխանութեան և կուսակալ Ալի Բէմալի փաշայի ջանից, հանրային անդորրութիւնը գոհացուցիչ վիճակի մէջ չէ ։ Զակդիրի գիւղացիք միշտ ահ ու սարսափի մէջ են և չեն համարձակիր իրենց տեղերէն շարժիլ, յիշելով որ դեռ վերջերս աւազակք գիւղացի կին մը լեռը տարած ու խողխողած էին անխնայ ։ Չարագործք, խեղճ կնոջ գլուխը բլրակի մը վրայ դնելով, վիզէն տախտակ մը կախած էին ուր գրուած էր թէ պահանջուած փրկանաց գումարը ժամանակին ստացած չը լինելնուն պատճառաւ գործած էին սոյն ոճիրը ։

Ուրիշ աւազակախումբ մ'ալ, Եանեայի սահմանակից Կոնիձայի գաւառակին մէջ ասպատակութիւններ կը գործէ, և յայտնի կ'երեւի թէ, կ'ըսէ Էքսբրէս, աւազակութիւնը ծաղկեալ վիճակի մէջ է նոյն իսկ Եպիրոսի գաւառին կեդրոն վայրերուն մէջ ։

Մայրաքաղաքիս աւստրիական դեսպանատան յատուկ շոգենաւն շաբաթ գիշեր մայրաքաղաքս եկաւ Թրիէստէն, և շոգենաւուն հրամանատարք՝ համազգեստաւ զարդարեալ երէկ յայց ելին դեսպանին ։

Լուր տուեր են Թէրճէմանը–Հագիգաթի, թէ անցեալ շաբաթ մը յառաջ Պէլկրատի անտառին մէկ կողմէն հրդեհ պատահելով՝ մէկ երկու օր շարունակելէն և անտառն այրեցնելէն ետքը յետոյ առաջքն առնուեր է, թէ՝ հրդեհին պատճառ եղած են անտառին մէջ խռնած մնացած խռիներն ու ոստերն, որ չորցեր և ինքնին բորբոքեր են, և թէ՝ ժամանակաւ թոյլ կը տրուէր աղքատիկ մարդոց, որ զանոնք հաւաքեն տանին, բայց ապա արգիլուեր է, և եթէ մնայ այս արգելքն՝ պիտի շարունակուին հրդեհի արկածք ։

Իտարէի Մախսուսէի Ճանիկ շոգենաւն՝ որ Աֆրիկեան–Տրիպոլիս երթեւեկելու յատկացեալ է, երէկ մայրաքաղաքէս ուղեւորեցաւ՝ զօրաց համար 2000 պարկի չափ ալիւր, ճանբորդ, և այլն բարձեալ ։

Ռոտոսթոյէն մեզ կը գրեն ․

«Այսօր առաւօտեան դէմ՝ քաղաքէս մի քառորդ ժամ անդին՝ մի քանի Հայեր ծըխախոտ փախցնելու միջոցին՝ կը պատահին Րէժիի սպահապան դէտերուն, որք թուով չորս հոգի կ'ուզեն զրաւել ծխախոտն ․ այս պատճառաւ կռիւ մը ծագելով՝ Րէժիի դէտերէն մին Ալպանեացի մ՝ րէվօլվէրի հարուածներով կ'սպաննէ Հայերէն մին որ 22 տարեկան երիտասարդ մ'էր Պետրոս անուն ։ Ուրիշ դէտ մը մի քանի թեթեւ վէրքեր ընդունած է ։ Այժմ Ալպանիացին ձերբակալուած է ։ Իսկ սպանեալ երիտասարդն յետ օրինական քննութեանց քաղաք բերուելով իւր ընտանեաց յանձնուեցաւ ։ Այս միջոցիս թաղելու վրայ են զայն Ս. Խաչ Թաղի գերեզմանատունը ։

«Կէլիպօլցի քահանայք, Տ. Խորէն և Տ. Գարեգին, որոց խնդիրն վերջ գտած է աստ, անցեալ կիրակէ մեկնեցան իրենց քաղաքն հրամանաւ Ս. Առաջնորդին և հրաւիրմամբ Կէլիպօլիի ազգայնոց ։

* * *

Օսմանլըի մէջ կը կարդանք ․

«Կ'երեւի թէ՝ Պուլկարիոյ հարկին կարգադրման և Պերլինի դաշնագրին համաձայն, Օսմանեան պարտուց մէջէն չորս մեծ Տէրութեանց բաժին եղող մասին վճարման խնդիրը ձեռք պիտի առնուի ։ Հանրային պարտուց վարչութիւնը կը փափագի զբաղիլ այս խնդրով և ընդ փոյթ լուծել զայն ։ Լոնտոնի Օսմանեան արժէքներոց մասնախումբն ալ այս նպատակաւ ձեռնարկներ կ'ընէ Լորտ Կրանվիլի քով որ յուսատու խոստումներ ըրած է ։

«Յարմարագոյն ժամանակ է այժմ այս գործին կարգադրութեան համար ։ Պուլկարիա ելմտական յաջող և բարգաւաճ վիճակի մը հասած լինելով, կարող է այժմ իւր պարտքն հատուցանել ։ Արդէն, կայսերական կառավարութիւնն և Հանրային պարտուց վարչութիւնն անպատճառ պարտաւոր չէին սպասել որ Պուլկարիա այս ծաղկեալ վիճակին հասնի ․ նա կարող էր, մանաւանդ պարտաւոր էր հատուցանել իւր հարկն և իւր բաժինն, համաձայն Պերլինի դաշնագրին տրամադրութեանց ։ Այս գործոյն կարգադրութիւնն անհրաժեշտ է, որպէս զի կայսերական գանձը չշարունակէ այլ եւս վճարել այն կարեւոր գումար զոր այժմ կուտայ Հանրային պարտուց Սնտուկին, ի հաշիւ Պուլկարիոյ հարկին ։ Միւս տէրութիւնք եւս, որք պիտի մասնակցին Օսմանեան Պարտուց, երկար ատենէ հետէ կը վայելեն իրենց խոստացուած առաւելութիւններն, և արդարութիւն է որ փոխադարձաբար իրենք ալ իրենց պարտականութիւնը կատարեն »։

Էքսբրէս կը պատմէ, թէ շաբաթ, կէս օրին երբ Քօնքօրտիայի հանգուցեալ տնօրէն Պ. Էվանկէլի Լիվատարի դագաղն եկեղեցի կը տարուէր, խուռն բազմութեամբ մը յուղարկաւորութեամբ, անգղիական դեսպանատան առջեւ դագաղին դէմ կ'ելնեն Սուլթան Ազիզ կայսեր որդւոյն, Իզզէտտին էֆէնտիի կառքն և հետեւորդք ։ Այդ փողոցը բաւական լայն լինելով, կառքը կըրնար անցնիլ, յուղարկաւորները մէկ կողմ անջատելով, սակայն Իզզէտտին էֆէնտի՝ ի յարգանս, հրամայեր է կառապանին՝ կառքին գլուխը դարձնել և մօտակայ ձկնավաճառաց նեղ փողոցէն գնացեր է՝ ուսկից բնաւ կառք չանցնիր ։ Էքսբրէս կը յարէ, թէ Բերայի մէջ մեծ գոհունակութիւն պատճառեր է կայսերազուն իշխանին այս կարգական ցոյցը ։

Ըստ Ճէրիտէի, Ղալաթիոյ ոստիկանապետներէն Խուրիս էֆէնտի, անցեալ երեկոյ շրջագայած ժամանակ 6–7 տարեկան մի քանի որբեալ մանուկներ գտեր է՝ որք փողոցը կը պառկէին ։ Թուրք լրագիրը կը յիշեցնէ, թէ բազում այդպիսի տարաբաղդ էակներ կը թափառին Ղալաթիոյ թաղին մէջ, և ոստիկանութեան ուշադրութիւնը կը հրաւիրէ ։

Հինգշաբթի երեկոյ քանի մ'աւազակներ Գարթալի մօտ Ցիամանտի անուն մարդու մը փարախը մտնելով, լաւ մը արբենալէ յետոյ, գիւղացին կը կապեն և լեռը կը տանին սպաննելու համար, բայց քանի մը դըրացիներ օգնութեան հասնելով, կ'ազատեն խեղճ գիւղացին՝ որ արդէն թեթեւապէս վիրաւորեալ էր, և ժամացոյցն ու վրան գըտնուած 1000 զրուշի գումարը կորսնցուցած ։

Իւսկիւտար, Զավուշ Տէրէսիի կողմը բընակեալ Մարտիրոս անուն ղամբարավաճառ մը կիրակի առաւօտ մեռեալ գտնուեր է անկողնոյն մէջ ։ Սղամպուլ կ'ըսէ թէ այլ ընդ այլոյ մեկնութիւններ կը տրուին այս անակնկալ մահուան վրայ, բայց ոստիկանութիւնը բժշկական քննութիւն մը բացած և ստուգած է թէ՝ մարդը կաթուածահար եղած էր ։

Վուրլայի մէջ ծաղկի հիւանդութիւն ծագած լինելով, Իզմիրէն բաւական քանակութեամբ պատուաստ ղրկուեր է տեղական բժիշկներուն որպէս զի ձրիաբար պատուաստեն ։

Չէշմէի մէջ եղբայրասպանութեան քըստմնելի դէպք մը պատահեր է այս օրերս ։ Երկու եղբարք իրենց մեռեալ հօր կտակը բացած ժամանակն, ժառանգական խընդրոյ մը համար կռուի բռնուելով, կրտսեր եղբայրը դաշոյնի հարուած մը մխելով անդրանիկին կուրծքն, անկենդան գետին կը փռէ զայն ։ Այս ոճրագործութեան լուրը տարածուելով քաղաքին մէջ, ոստիկանութիւնը կը փութայ ձերբակալել եղբայրասպանն ։

Ադրիանուպոլսոյ պաշտօնական լրագիրը կը պատմէ թէ հոկտեմբեր 13/25 ի գիշերը 12 մարդէ բաղկացեալ աւազակախումբ մը Սեւ ծովու եզերքն Ակաթօպօլի գաւառակին Վասիլիքօ գիւղը կոխելով, երկու մարդ գերի տարեր են ։ Տեղական ոստիկանութիւնն անմիջապէս չարագործաց ետեւէն յարձակելով, պաշարեր է զանոնք ։ Աւազակները խոհեմութիւն համարեր են յայնժամ երկու գերիները թողուլ իրենց կեանքն ազատելու համար և դէպ ի լեռը խոյս տըւեր են ։

ՀԱՆՐԱՅԻՆ ԳԱՆԳԱՏ ․ Հասարակութիւնը շատ անգամ բարձրաձայն կը գանգատի թէ լաւ տեղեակ չէ թէ ի՛նչ կերպով ծրարուած են Պրանտ քիմիագէտին Զուիցերիական դեղահատներն, որք վերջերս մեծ յաջողութեամբ սկսան գործածուիլ ամենուրեք, որովայնապնդութեան, աղեաց հիւանդութեանց, մաղձի, մանաւանդ մարսողական գործարանաց խանգարման դէմ ։ Որպէս զի ամեն ոք անխարդախ դեղահատներ գնէ, կը ծանուցուի թէ այս դեղահատները կը ղրկուին ճերմակ թիթեղեայ տուփի մէջ, աւասանով մը կապուած և վրան պիտակով մը, յոր կը նշմարուին սպիտակ խաչ մը կարմիրի վրայ և քիմիագէտին անունը ։ Ասոնցմէ դուրս պայմանաց մէջ գտնուող ո և է պատրաստութիւն խարդախեալ է և պէտք է յետս դարձուի ։

ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՆ է, ամբողջ Թուրքիոյ համար, Կ. Պոլիս, Ղալաթիա, Եուսուֆ Իզզէտտին խան, Պ. Ժ. ՐԻԿԻՔԷՀՕՖՖԻ վաճառատունը ։ Կը գտնուին նաև գլխաւոր դեղագործաց խանութներն ։

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

(Այսօրուան)

ԱԺԱՆՍ ՀԱՎԱՍ

ԱԶԱՏԱԿԱՆՔ ԵՒ ԿՂԵՐԱԿԱՆՔ Ի ՊԵԼՃԻԱ

Պրուքսէլ, 27 Հոկտ ․

Նոր (կաթոլիկ) նախարարութիւնը կազմուեցաւ ընդ նախագահութեամբ Պ. Պէռնաէրդի ։

Հէնոյի նախկին կառավարիչ Գարաման Շիմէյ իշխանն արտաքին գործոց նախարար անուանեցաւ ։

ԲԱՑՈՒՄ ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ

Սոֆիա, 27 Հոկտ ․

Աղէքսանդր իշխանն անձամբ բացաւ այսօր Երեսփոխանական ժողովոյ նոր նստաշրջանն ։

Իւր ճառին մէջ, Իշխանն հաստատեց երկրին վայելած անդորրութիւնն և Պուլկարիոյ համար տէրութեանց ունեցած հաստատուն բարեացակամութիւնը ։ Ծանոյց թէ ներկայ նստաշրջանին մէջ զանազան օրինական ծրագրեր պիտի ներկայացուին ելեւմտից վերաբերմամբ ։ Երեսփոխանական ժողովոյ ուշադրութիւնն հրաւիրեց Պուլկարիոյ երկաթուղեաց Եւրոպական երկաթուղեաց հետ միացման խնդրոյն վրայ ։

Իշխանն իւր ճառը վերջացուց յոյս յայտնելով որ ի մօտոյ կը հարթուի Սերպիոյ հետ վէճը ։

ՔՈԼԵՐԱՆ Ի ԻՏԱԼԻԱ

Հռոմ, 27 Հոկտ. եր ․

Այսօր 6 հոգի մեռան քոլերայէ ի Նաբոլի, 15 հոգի զանազան տեղեր ։ Ընդ ամենը, 21 հոգի ։

ՔՈԼԵՐԱՆ Ի ՃԷԶԱՅԻՐ

Օրան, 27 Հոկտ. եր ․

Այսօր 3 հոգի մեռան քոլերայէ աստ ։

ԱԺԱՆՍ ՌՈՒԻԹԷՐ

ԵԳԻՊՏՈՍ

Գահիրէ, 26 Հոկտ ․

Լորտ Նորթպրուք Մարսիլիա գնաց ։ Կառավարութեան որոշման համեմատ եգիպտական բանակին 3,000 հոգւոյ իջնելուն պէս, այս բանակին մէջ ծառայող բոլոր անգլիացի սպայներն, ի բաց առեալ միայն 10 հոգի՝ որք հրաժարական պիտի տան, Սուտան գնացող անգլիական բանակին պիտի հետեւին ։

ՊՐՈՒՆՍՎԻՔ

Պերլին, 26 Հոկտ ․

Քումպէրլանտի դուքսն յայտարարութիւն մը հրատարակեց, որով կը պահանջէ Պրունսվիքի դքսութեան յաջորդելու իրաւունքը ։ Գերմանիոյ կայսրն անմիջապէս մերժեց Դքսին սոյն պահանջումը ։

ՈՉՆՉԱԿԱՆՔ Ի ՌՈՒՍԻԱ

Պետրսպուրկ, 26 Հոկտ ․

Ոչնչականաց դաւադրութիւն մ'երեւան ելաւ աստ, որոյ նպատակն էր Ցարն սպանանել ։

ԴՐԱՄԱԿԱՆ

ԳԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 16 Հոկտեմբեր

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՑ

3 ամիս Լոնտրայի վրայ (պահքայի)	110
3 » » (վճարելի)	109 7/8
3 » Բարիզ » (պահքայի)	22 87 1/2
» » » (վճարելի)	22 95

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹՂԹՈՑ

Օսմանեան Քօնսօլիտէ

Երէկ երեկոյ գոցուեցաւ (գ. կ.) դհկն.		8 33
Պորսային գոցուելէն վերջը	» »	8 30
Բերսայի մէջ	» »	
Առաւօտուն բացուեցաւ	» »	8 29 1/2
Բարձրագոյն գին	» »	8 29 1/2
Նուաստագոյն	» »	8 28 1/2
Կէս օրին	» »	8 29
Իւնիֆիէէ Եգիպտական		69 5
Երէկ իրիկուն գոցուեցաւ		68 30
Բերսայի մէջ		—
Այս առտու բացուեցաւ		69 5
Կէս օրին		69 05
Հէվալէսիզ		
Բէքոր գօնսօլիտէի		—
» իւնիֆիէի		—
Փոխառութիւն 1863 (գ. կ.)	Ֆր.	68
» 1865 »	»	55
» 1869 »	»	47 50
» 1873 »	»	43 50
Պօն տիւ Թրէզօր	Անգլ. Լր.	20
Ռումէլիի երկաթուղի	Ֆր.	43 50
Օպլիկասիօն տը Բրիօրիթէ	»	—
Բաժնեթուղթ Լաւրիոմի	»	77

ԲԱԺՆԵՏՈՄՍԻՔ

Ծօսիէթէ Ժէնէրալ	Անգլ. Լր.	3 30
Քրէտի Ժէնէրոլ (գ. կ.)	Օսմ. Լր.	6 28
Պանք տը Գոնս	»	5 30
Սօս. Շահմ է Վաչէօր	Օսմ. Լր.	3 28
Թրամուէյ	» »	282

Ընթացք դրամոց

Օսմանեան ոսկի	ղրշ.	100
20 Ֆրանքնոց	»	87 35
Անգլիական ոսկի	»	110 2
Բօլ Իմբէրիալ	»	90 10
Ֆլորին	»	51 20
Ռուսական Թղթադրամ	»	8 90
» արծաթ	»	89 30
Ֆիօրին	»	9
Մէճ. արծ. (տարբ.)	»	107 39
Վեցնոց	»	103 5
Հինգնոց	»	103 10
Մէթալիք	»	99
Պղինձ	»	800
Թղթադրամ	»	3000

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 27 Հոկտեմբեր ժամ 5 վայր. 15 երեկոյ

Անգլ. քօնսօլիտէ գոցուեցաւ	100 3/4
Օսմ. բացուեցաւ	8 1/16
» » գոցուեցաւ	8
Օսմ. փոխառութիւն 1865	10 7/8
» » 1869	9 5/8
» » 1871	67 1/2
» » 1872	19 1/4
» » 1873	8 3/8
Փոխառութիւն 1877	79 1/2
Պանք Օթօման	12 3/8
Ռուսական փոխառ. 73 (գ. կ.)	94 1/8
Եգիպտական միացեալ (իւնիֆիէ)	63 1/4
» առանձն. (բրիվիլէժիէ)	84 1/2
Տայրա Սանիէ	59
Տօմէնիալ (փոխառ. Րօչիլտ)	86 1/2
Հունգարական պարտաթուղթ 1877	102 3/8
Փոխանակութիւն Բարիզի վրայ	— —

Վիէննա, 26 Հոկտեմբեր ժամ 4 երեկոյ

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	122 30
Օսմանեան երկաթուղի	21

Բարիզ, 26 Հոկտ. ժամ 3 վայր. 45 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 4 1/2 0/0 բաց	109 02 1/2
» » 3 0/0 բաց	78 20
Օսմանեան քօնսօլիտէ բացուեցաւ	8 15
» » գոցու. (գ. կ.)	8 05
» » 1865	56
» » 1869	48
» » 1873	43
Օսմանեան երկաթուղի	43 75
» Բէժիի բաժնեթուղթք	516 25
Պանք Օթօման	562 50
Գրէտի Լիօնէ	531 25
» Ֆօնսիէ	1283 75
Բաժնետոմս Լիոնի (գուբ. կոր.)	1232 50
Սուէզի ջրանցք	1892 50
Ռուսական 5 0/0 1877ի	99 1/2
Իտալական Ռանթ	96 50
Եգիպտական միացեալ գոց	318 75
Սպանիական (արտաքին)	59 1/2
Բէօրիթէ Թիւրք	377 50
5 0/0 Հիլէնական	363 75
Չէք Լոնտրայի վրայ	25 24

ԲԱՐԻԶ ԲԹԻԹ ՊՈՒՐՍ

Հոկտեմբեր 27 ժ. 10, վ. 30

Ֆրանս. Ռանթ, 4 1/2 0/0	109 07 1/2
Օսմանեան »	8 07 1/2
Եգիպտական միացեալ	318 75

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

«ԱՐԵՒԵԼՔ»Ի

Վան, 2 Նոյեմբեր 1884

Վան՝ աշխարհագրական այնպիսի առանձնացած դիրք մ'ունի որ լրաց այս աննախանձ վիճակի մէջ բնաւ առևտրական կեդրոն մը չը կրնար լինել։ Շրջակայ չահաստաններէն եկած ցանցառ կարաւանները կը վերջանան Վանի մէջ, որով փոխանցման ոչ մի գիծ չանցնիր Վանէն։ Թէև շրջապատուած բարեբեր գաւառներէ, բայց յաճախ այդ բնական առաւելութիւններէն օգուտ չենք կարող քաղել՝ հարթ ճամբաներու կատարեալ բացակայութեան համար։ Երկու տարի ու կէսէ ի վեր այստեղ կը գտնուի արքունի Լիսէի ընթացաւարտ երկրաչափներէն Պ. Պօղոս Թագւորեան, որ թէև պաշտօնավարութենէն ի վեր խղճի մտօք չարունակած է յատակագծեր պատրաստել, ճամբաներու, կամուրջներու և հասարակային օգտակար շինութեանց ծրագրեր չինել խնամօք, սակայն ցաւալի է տեսնել որ տեղույս քաղաքապետական խորհուրդը ցարդ չէ կրցած ընձեռել եռանդալից երկրաչափին պէտք ունեցած կարևոր միջոցները, որով այդ ծրագրեր անգործադրելի կը մնան ցարդ։ Մինչդեռ կայսրութեան զանազան գաւառները գէթ խճուղի մը ունենալու բաղդը կը վայելեն, այս տեղ հասարակ ճամբու մը կամ կամուրջի մը շինութիւնք երազի պէս անիրանալի կը թուի ժողովրդին։ Մեծ յոյս ունիմք որ նորընտիր կուսակալ Վսեմ. Հալիմ փաշան իւր բարձր ուշադրութիւնը կը նուիրէ ճամբաներու յարդարման գործին։

Վանեցիք միշտ առանձին յարգանքով ու կարօտով կը յիշեն 20 տարի առաջ այս տեղ պաշտօն վարող Սպտուլլահ փաշայի անունը որ մեծ խնամքով աշխատեր է շինել տալ այս տեղ արուեստական լիճեր՝ երկրի ոռոգման համար և կամուրջներ՝ որք սակայն իւր տարաժամ պաշտօնանկութեան պատճառաւ երեսի վրայ մնացած են այժմ, և հետևապէս անօգուտ։

Եթէ կան քանի մը «շօսէ» կոչուած գիծեր որք Վան Էրզրումին կամ Խոյին կը միացնեն, դոքա ալ տարւոյ զանազան եղանակներ իրենց յատուկ արգելքներ կ'ունենան. ձմեռներ (5-6 ամիս) բուքի վտանգները կը յաճախեն, գարուն՝ անձրևի պատճառաւ ուղիներ տղմուտ կը դառնան ևն. ևն. այնպէս որ տարւոյ քանի մ'ամիսները միայն Կարնեցի Թիւրքերուն փոքրիկ սայլակները կրնան երթևեկել Կարնէն ի Վան։ Իսկ մնացած ատեններ գրաստներով կը չարժին կարաւանները։ Ապրանքները սովորաբար 25 օրէն կրնան հասնիլ Տրապիզոնէն ի Վան, և 13 օրէն՝ Էրզրումէն այս տեղ, եթէ միայն ջորեպաններ պատրաստ գտնուին յէրզրում։ Բայց յաճախ ապրանքները Էրզրում կ'սպասեն 10-15 օր ջորեպան գտնելու համար։ Գարնան ժամանակ երբ գետեր կը յորդին՝ կարաւան մը 18 օրէն հազիւ կը հասնի Էրզրումէն ի Վան։ Փոխադրութեան ծախքը Տրապիզոնէն մինչև Վան սովորաբար 380 ղրուշ կը լինի խանթար գլուխ, (մէկ խանթար հաւասար է 180 օխայի), թէև շատ անգամ այդ ծախք կը բարձրանայ 450-500 ղրուշի։

Հարաւային գաւառաց հետ (Շուլամերկ, Շատախ, Մոկս, Պօհթան, Ներթօշ) քաղաքիս ունեցած յարաբերութիւնք բնական և արուեստական աւելի մեծ դժուարութիւններ կ'ընծայեն։ Այդ գաւառաց նեղ ճանապարհներէն յաճախ կը պատահի որ գրաստներ և նոյն իսկ ուղևորներ գլորուին դէպ ի անդունդ, զի շատ տեղ ճամբան լերանց կողերէն կ'անցնի։ Այս դժուարութիւններ մոռացուած են տեղացւոց՝ երկրի բերքերը արտահանելուն վրայ այլ ևս մտածելը, և բնական հարստութիւնք անմշակ մնալով ի բնէ ընդհանուր աղքատութեան երևոյթ մը կ'ստանայ երկիրը։

— Ցարդ Սրճէչի կարաւանը կողոպտող գողերը չեն յայտնուած։

— Գաւառական երեսփոխանական ժողովը, որ ծանօթ մի քանի խնդիրներու պատճառաւ պիտի գումարուէր, տակաւին չէ կրցած հաւաքուիլ ի նիստ, և կը կասկածինք իրաւամբ թէ բնաւ գումարուելիք ալ չունի։

Բաղէշ, 3 Հոկտեմբեր 1884

Կարնոյ անգլիական հիւպատոսը սեպտեմբեր 29ին աստ եկաւ և հոկտեմբերի 1ին մեկնեցաւ ի Սղերդ և անտի Տիգրանակերտ։

Սխալ է Թարիֆի տուած այն լուրը՝ թէ Վանայ անգլիական, ռուսական և պարսկական հիւպատոսք աստ պիտի գան և քանի օր մնան։ Այդ լուր Պարսիկ մը տարածեց, որ ինքզինք դերհիւպատոս կը հռչակէր և որ արտաքսուեցաւ։

—Այս օրերս Հաճնոյ բռնի ամուսնութեան խնդրոյն նման խնդիր մ'ալ աստ տեղի պիտի ունենար, բայց բարեբաղդաբար մեր Գաւառական Վարչութեան նախագահը Մոկացեանն է և ոչ Փէքմէզեան։ Գուլթիկցի Պօղոսի դուստրը նիւնէ՝ որ այժմ 20 տարեկան է, 12 տարի առաջ Գուլթիկցի ազգայնոյ մը տղուն կը նշանուի երբ ք հինգնոցի փոխարէն։ Այդ ազգային՝ իւր կնոջ և տղուն հետ Պոլիս կ'երթայ և ցարդ վերադարձած չէ։ Աղջիկն այժմ չափահաս լինելով՝ իւր յօժարութեամբ կ'ուզէ ամուսնանալ Պ. Գրիգոր Խանամիրեանի հետ, և տեսնելով որ գիւղի քէհեաներ ընդդիմութիւն կը յարուցանեն, խնդրագրով կը ներկայանայ Խառն ժողովոյ։ Թէև Պոլսէն երկու հեռագիր եկաւ գործը յետաձգել մինչև որ աղջկան առջի նշանածը գայ, բայց Խառն ժողովը տեսնելով որ աղջիկն ու մանչը կը յայտարարեն թէ զիրար կ'ուզեն առնուլ, անմիջապէս կը հրամայէ պսակադրութիւնն որ հոկտեմբեր 1ին կատարուեցաւ։

—Արևելքի մէջ Բաղիշոյ Խնդրակատար Ս. Աստուածածնայ վանուց պարտքը 70 ոսկի գրուած էր, մինչդեռ պիտի ըլլայ 270 ոսկի։

ՌՈՒՍԱԿԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Տփղիսի հայ լրագրաց մէջ կը կարդանք.

ՍՊԱՀԱՆԻՑ (ՆՈՐ-ՋՈՒՂԱՅ). Ջիլլի-Սուլթան արքայազնից առանձնաշնորհութեան արժանացաւ հայազգի Պ. Յուսիկ Փափաղեանցի լուսանկարչային գործարանը։ Նա այժմ «Ակքաղ Բաշի» տիտղոսով և առատ ռոճկով գտնվում է Նորին Բարձր հովանաւորութեան ներքոյ։ Շատ հայեր պարսից թէ՛ արքայազանց և թէ՛ գըլխաւոր պաշտօնակալաց մօտ յարգանք վայելել և վայելում են, սակայն դըրանք իրենց ազգի անթիւ աղէտներին խնամք տանելու վերայ չեն մտածել։

* *

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ։ Դերասան Պ. Ադամեանը այստեղ է և մտադիր է թատրոնասէրների մասնակցութեամբ Քին ներկայացնելու։ Նա արդէն ռուսաց խմբի հետ Ռոստովի թատրոնում ներկայացրեց Շէքսպիրի «Համլէտը»։ Ինքը Ադամեանը Համլէտի դերը խաղալով իւր դերը կատարեց հայերէն լեզուով, իսկ խումբը ռուսերէն։ Մեծ ոգևորութեամբ ընդունուեցաւ ռուս հասարակութիւնից Ադամեանը և հիացրեց ամենքին իւր խաղով։ Զգալի յառաջդիմութիւն է նկատվում Պ. Ադամեանի մէջ։ Նախկին և այժմեան Ադամեանի մէջ բաւականին տարբերութիւն կայ։

* *

Ռուսական լրագիր մը կը գրէ. Վէյսէնշտէյնից, որ այդ քաղաքի շրջակայներում, Տուրպելսկեան գաւառում, մի ութժամեայ աղջիկ, Լիզա Պ. անունով, դանակով սպանել է իւր հնգամեայ քրոջը։ Այդ սպանութիւնը, ինչպէս քննութիւնից երեւաց, մտածած է եղել։ Երկու աղջիկները մի փոքր որ բազմերանգ կապերտի համար միմեանց հետ կռուել են, որը մեծ քոյրը աշխատել է խլել փոքր քրոջ ձեռքից, բայց չի կարողացել։ Այն ժամանակ Լիզա Պ. սպառնացել է իւր քրոջը, որ նա հետեւեալ օրը նրան կը սպանի, եթէ որ նա կամաւոր չի տայ այն կապերտը։ Փոքրահասակ յանցաւորը սկզբում ուրացել է, բայց յետոյ խոստովանել է իւր մեղքը։

* *

«Նոր-Դար» պատուական լրագրի Նօ. 148ում մի շատ տխուր լուր կար զետեղուած, որի առիթով գրել էինք «Հայկական բարբարոսութիւն» վերնագրով առաջնորդողը, որ շատ մեծ ազդեցութիւն արաւ մեզ վերայ։

Այս առթիւ ես կարևոր եմ համարում մի անցք պատմել «Նոր-դար»ի ընթերցողներին, որը ճշմարիտ իրողութիւն էր։

Սրանից 5 տարի առաջ Ա. քաղաքում մեռաւ մի շատ պատուաւոր, բայց վերին աստիճանի աղքատ կին։ Այդ կնոջ շատերը այրի էին համարում, բայց նա այրի չէր։ Նրա ծնողները իրենց երկրի սովորութեամբ (նա Խոտորջուրցի էր, իսկ Խոտորջուրը գտնւում է Էրզրումի վիլայէթում և կազմուած է եօթ գիւղերից) նշանադրել էին դեռ օրօրոցում եղած ժամանակ մի քահանայի որդւոյ վերայ։ Անցնում են տարիներ, օրիորդը մեծանում է և դեռ վեց տարեկան հասակում պարտաւորվում է «հարսնութիւն» անել, այսինքն երես ծածկել, չը խօսել, ձեռ համբուրել ևայլն։

Նա թէև մանուկ է, բայց արդէն «նշանուած է» համարվում, չը նայելով որ չը գիտէ թէ ո՞ւմ վերայ և թէ ո՞վ է իւր փեսացուն։ Վերջապէս երբ օրիորդը 15 տարեկան է դառնում, ճանաչում է իւր փեսացուն, այդ ժամանակից սկսում է ատել և արհամարհել նրան։ Չը նայելով աղջկայ լացին և աղաչանքին, չը նայելով, որ եկեղեցին և բնութիւնը ընդդէմ են, որ մարդ չի կարող ապրել իւր չը սիրածի հետ, այնու ամենայնիւ մոլեռանդ քահանաները բռնի պսակում են նրան։ Պարզ է, որ նրանց ընտանիքում սէրը չէր թագաւորում և ցաւերը ամեն օր անպակաս էր։

Երիտասարդը գինեմոլ անխտանին մէկը լինելով՝ ամիսներով չէ հանդիպում տանը և խեղճ կինը օրերով սոված է անցնում. վերջը տեսնելով, որ հասարակութիւնը շատ է մեղադրում, ամուսինը վեր է առնում կնոջը և գալիս է Կովկաս։ Նա թողնում է կնոջը Ա. քաղաքում և ինքը փախչում է Ռուսիա։ Թշուառ կինն ամբողջ տասն և չորս տարի իւր երեք տղոց հետ սպասում է ամուսնու գալստեան...։

Դժուար է նկարագրել թէ ի՛նչ օրեր էր անցնում նա օտարութեան մէջ։ Իսկ անառակ ամուսինը Ն. քաղաքում ապրում էր մի ուրիշ կնոջ հետ։ Իւր օրինաւոր կնոջ աղերսական նամակները, լացը և կոծը չէին մաքրում նրա քարացեալ սիրտը. Վերջապէս կինը ամբողջ տասն և հինգ տարի անտանելի նեղութիւններ կրելուց յետոյ, կնքեց իւր մահկանացուն, իսկ նրա որդիքը աւելացրին սրիկաների թիւը։

Պարզ է, որ անհայր և անմայր որդւոց տեղը կամ փուռն է կամ գինետունը։ Արդեօք այսպիսի օրինակները ինչո՞ւ իբր դրդումն չեն ծառայում մեր հոգեւորականների համար։

ԴԱՏԱԿԱՆ

Պատժական օրինաց 177դ. յօդուածի տրամադրութեան համեմատ, եթէ ոք ուրիշ մը գանակոծելով կամ վիրաւորելով անոր մէկ անդամին կիրառութիւնը վանդէ և կորուստը պատճառէ՝ կը դատապարտուի դարմանի համար հարկաւոր եղած ծախքերը վճարել, ըստ Շէրիի օրինաց փոխարինութիւն հատուցանել, և երեք տարի չըլթայակապ աշխատանաց ենթարկիլ։ Մարդուս ակռաներն անդամոց կարգը դասուելով՝ երբ մէկն ուրիշի մը զարնելով ակռայի կորուստ պատճառէ, մեղապարտը վերոյիշեալ յօդուածի տրամադրած պատիժը կ'ընդունի՞ թէ ոչ։ Օրինական այս փափուկ խընդիր ժամանակ ժամանակ մէկ մէկու տարբեր կերպով լուծուած լինելով դատարաններէն, այս անգամ վճռաբեկ դատարանի Խառն Համագումար ժողովոյ (1) կողմանէ իւր վերջնական լուծումը կ'ընդունի որոշմամբ մը՝ զոր դատական նախարարութեան Ճէրիտէի Մէհաքիմ լրագրէն առնլով կը հաղորդենք Արևելքի ընթերցողաց։

Վճռաբեկ դատարանի պատժական ատեանն ընթերցաւ Ատանայի վերաքննիչ ատենի 1 ճէմազիլ էվվէլ 1299 թուակիր վճռագիրն, ինչպէս նաև անոր վերաբերմամբ ընդհանուր դատախազի կողմանէ մատուցեալ 10 չուալ 1299 թուակիր ծանուցագիրն, որոց ամփոփումն էր հետեւեալը։

Թարսուս գաւառակին Թէղնիկ գիւղի բնակիչներէն Քէլ Պէքիր օղլու Մուսթաֆա նոյն գիւղի բնակիչներէն Թոմա Հիւսէյինը գանակոծելով՝ չորս ակռաները թափելու պատճառ եղած, և ոճրագործութեամբ ամբաստանուած էր։ Ատանայի վերաքննիչ ատեանը քննելով գործը մանրամասնութեամբ որոշած էր պատժական օրինաց 177դ. յօդուածոյ Ա. պարբերութեան համաձայն զՄուսթաֆա երեք տարի չըլթայակապ աշխատանաց ենթարկել, իսկ փոխարինութեան համար Շէրիի դատարանին դիմել։

Վճռաբեկ-պատժական Ատեանը քննութեանց և խորհրդակցութեանց մանելով կը հաստատէ թէ Ատանայի վերաքննիչ Ատենի կողմէ տրուած սոյն որոշման մէջ դատավարական թերութիւնք չ'կան, սակայն սոյն վճռոյն առթիւ կարծիք յայտնուած պաշտօն, հարկ կըլլայ քննել թէ ակռաներն իբր զատ և անկախ անդամ նկատելով, կարելի՞ է թէ ոչ, կորուստ պատճառած ժամանակ, 133դ. յօդուածի մէջ նշանակեալ ոճրագործութեան պատիժ սահմանել մեղապարտին, հետևաբար հակառակ պարագային, Մուսթաֆայի դէմ արտասանուած վճիռն օրինաց համաձայն է՞ թէ ոչ։ Այս խնդրոյն նկատմամբ կարծիքները փոխանակուելով, Նախագահն, և անդամներէն Հաչիմ պէյ, Իպիւտէս և Բիւչրի էֆէնտիները կը կարծեն թէ «Քանի որ մէկ ակռային իսկ կորուստն անդամոց բնական պաշտօնին քիչ շատ կը վնասէ, և քանի որ ըստ Շէրիի օրինաց ասոր համար փոխարինութիւն կը պահանջուի, պէտք է ակռաներն իբր անդամ նկատել և այս տեսութեամբ տրուած վճռագիրն հաստատել»։ Իսկ Ատենի անդամներէն Մազհար պէյ, Շահզատէ էֆէնտի, Մուսթաֆա պէյ և Խըրիսթօֆորիտի էֆէնտի տարբեր կարծիք մը յառաջ կը բերեն, որ է, «Թէ և ակռան մարմնոյն անդամներուն հետ յարակցութիւն ունի և ակռաներուն ամբողջութիւնը զատ անդամ մը համարիլ բնական է, սակայն նկատելով որ անոնց մէկ քանիին պակասութիւնը չ'դադրեցներ և չ'խափաներ այն ծառայութիւնը զոր ակռաներու ամբողջութիւնն իբր զատ անդամ՝ կը մատուցանէ մարմնոյն, նկատելով ուրեմն թէ այս տեսութեամբ ակռաներէն մէկ քանին չէ կարելի համարիլ իբր զատ անդամ, Մուսթաֆայի գործը ոչ թէ իբր ոճիր, այլ յանցանք (ճէնհա) սեպել հարկ է, ուստի և յիշեալ վճռագիրն իբր օրինաց անհամաձայն բեկանել անկ է»։

Սոյն կրկին կարծեաց վրայ, Ատենի մէջ ձայներու հաւասարութիւն պատահելով՝ խնդիրը ենթարկուեցաւ Խառն Համագումար ժողովի քննութեան, որ երկրորդ կարծիքին յարելով, մեծամասնութեամբ կ'որոշէ, Մուսթաֆայի գործն իբր ոճիր չ'նկատել, այլ իբր յանցանք և հետևաբար Ատանայի վերաքննիչ Ատենի կողմանէ տրուած վճռագիրը բեկանել։

ԳԻՏԱԿԱՆ

ԱՌԱՋԻՆ ՄԻՋՕՐԷԱԿԱՆ ԵՒ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺԱՄ

Ամերիկայէն ստացուած տեղեկութիւնք կը ծանուցանեն հոկտեմբերի սկիզբը գումարեալ Համազգային ժողովոյ որոշումներն՝ ի մասին Առաջին Միջօրէականի և Տիեզերական Ժամու։

Բացատրած եմք ժամանակին թէ ինչպէս այս խնդիրը ծագում առած էր, թէ ի՛նչ անպատեհութիւնք կային տարբեր երկիրներու մէջ աստեղագիտական և աշխարհագրական պիտոյից համար Միջօրէականներու տարբեր ընտրութեամբ, և թէ ժամերու զանազանութիւնք ի՛նչ կարգի շփոթութեանց պատճառ են։ Համի մէջ հաւաքեալ Համազգային ժողով մը նախնական վիճաբանութեան ենթարկած էր այս խնդիրներն և ցոյց տուած էր կարելիութիւնն կառավարութեանց միջև համաձայնութեան այսպիսի կենսական խնդրոյ վրայ՝ որոյ հետ յարակցութիւն ունին նաւարկութեան և հետևաբար վաճառականութեան ծաւալումն, աստեղաբաշխութեան յառաջդիմութիւնն և աշխարհագրութեան պարզումն։

Թէպէտև տակաւին չունինք վերջին ժողովոյ ատենագրութիւնքն և վիճաբանութեանց ընթացքը, այլ սակայն ջանանք երկու բառով հեռագրեալ որոշումները բացատրել և տեսնել թէ ի՛նչ հետևութիւնք կարելի է քաղել ասոնցմէ, թողլով յառաջիկային ժողովոյն զանազան վիճաբանութեանց նկարագրութիւնը տալ այս սիւնակներու մէջ։

«Առաջին Միջօրէականը Կրինիչէն պիտի սկսի»։

Այս է գլխաւոր վճիռը՝ որ ստուար մեծամասնութեամբ արձակուած է, Ֆրանսայի ներկայացուցչին ձեռնպահ մնալով։

Գիտէ՞ք որ այս որոշման հետևանքը մեծ է, այնքան մեծ՝ որ մինչև իսկ մեր նախնական վարժարանաց մէջ պիտի ազդէ։ Արդարև Միջօրէական ըսելով կը հասկնանք շրջանակ մը որ գունտի մը երկու բևեռներէն անցնելով, զայն հաւասար կիսագնդերու կը բաժնէ։ Առնենք ձմերուկ մը, կոթէն և գագաթէն անցնելու պայմանաւ դանակի հարուածով մը երկուքի բաժնենք, և անոր մակերևութին վրայէն դանակին անցած ճամբան կ'ըլլայ Միջօրէական։ Եւ քանի որ ձմերուկը զանազան կերպով կրնանք միջօրէաբար հատանել, հատանման մասը ճշդելու համար բաւական է որ անոր վրայ կէտ մը միայն առնենք և որոշենք թէ այդ կէտէն ու բևեռներէն անցնող Միջօրէականին վրայէն ընթանայ մեր դանակը։ Եւ ուրովհետև երեք կէտէ միայն մէկ շրջանակ անցնել կարելի է, ուրեմն ձմերուկին դագաթնակէտը, կոթը և վրան որոշ կէտ մը և կամ երկրիս բևեռներն ու Կրինիչը որոշենք, այս բաւական է մի և անխախտ Միջօրէական մը ստանալու համար։

Այս դասախօսութիւնը չէ՞ր որ Ֆիլատելֆիոյ ժողովին մէջ կ'զբաղեցնէր գիտուններն՝ որոնք քաջ գիտեն թէ երեք կէտերէն քանի՞ շրջանակ կրնայ անցնիլ. այլ երկրիս բևեռներն ի բաց առեալ՝ երրորդ կէտին որոշումն էր, որոյ համար երկրաչափական և աստեղագիտական կարողութենէ աւելի՝ մարդասիրական, յառաջդիմասիրական և զոհողութեան զգացումներ հարկաւոր էին, եւ բարեբաղդաբար ըստ բաւականին գտնուեցան։ Տեսական նկատողութեամբ՝ երկրիս ամեն մէկ կէտը, թէ՛ ծովու վրայ եւ թէ՛ ցամաքի, առաջին Միջօրէականի համար կրնայ ընդունուիլ։ Կ. Պոլիս յարմարագոյն է քան զԿրինիչ, ինչու որ մեր երկիրը աւելի պայծառ է եւ աւելի ճիշդ աստեղագիտութեան համար քան մըգապատ Անգլիան, եւ Արարատ լեռը յարմարագոյն քան զԿ. Պոլիս, ինչու որ Կրինիչ և Կ. Պոլիս կրնան կորսուիլ ժամանակին տեւողութեամբ, ինչպէս Բաբելոններ, Տրովադաներ, մինչդեռ Արարատ լեռը կայ Նոյ նահապետէն ի վեր եւ պիտի մնայ այնչափ՝ որչափ մարդիկ Միջօրէականներ գործածեն։

Ինչ լաւ բան կ'ըլլար եթէ Նոյ նահապետ զոյգ մը կենդանի պակաս ունենար տապանին մէջ և Միջօրէականը որոշէր փոխանակ օձեր ու ճիւաղներ պահելու։ Այժմ այս խնդիրները չէինք ունենար։ Թող որ ինք ալ իւր նաւարկութեան մէջ պէտք չէր ունենար ցամաք գտնելու համար աղաւնի արձակելու, այլ հաստատ կը գիտնար թէ ցամաքը ո՛ր կողմն է, ինչպէս Քրիստափոր Քոլոմպոս գիտցաւ ի շնորհս գիտութեան։

Աշխարհացոյց տախտակներու վրայ նըշանակեալ վերէն վար իջնող գծերն են որ Միջօրէականը կը ներկայացնեն. լաւ ուշադրութիւն ընելով կը տեսնենք թէ այս վերէն վար իջնող գծերուն թէ՛ վերի և թէ՛ վարի ծայրերը թուանշաններ կան։ Ասոնք աստիճաններ են։

Մինչև ցարդ շինուած աշխարհացոյց տախտակները պիտի տարբերին ասկէ վերջ պատրաստուելիքներէ (ի բաց առեալ Անգլիականներէ), ինչու որ եթէ երկու քարտէս առնենք, մին ի Ֆրանսա տպագրեալ և միւսն յԱնգլիա, պիտի տեսնէք թէ նոյն Միջօրէականները նոյն երկրին նոյն կէտերէն չեն անցնիր. որովհետև առաջինները Փարիզէն կսկսին և երկրորդները Կրինիչէն։ Ի դիւրութիւն աշխարհագիտաց ամբողջ երկիրս 360 միջօրէականներու բաժնուած է ցարդ, որոնք իրարմէ հաւասար հեռաւորութեամբ են և որոնց առաջինը կը գտնուէր կամ Փարիզի վրայ և կամ Կրինիչի վրայ։ Միջօրէականի թուանշանները որ կը կոչուին նաև Երկայնութեան աստիճան, ցոյց կուտան թէ որոշեալ քաղաք մը քանի՞երորդ Միջօրէականին վրայ կը գտնուի։ Կ. Պոլսոյ երկայնութեան աստիճանն է Բարիզէն առնելով 26⁰, 38, 50, ըսել է թէ Կ. Պոլիս Փարիզէն առնելով 26 և 27րդ միջօրէականներու մէջտեղը կը գտնուի։ Եթէ անգլիական քարտէս մը ունինք, պիտի տեսնանք թէ 28 և 29րդ միջօրէականներու մէջտեղն է Պոլիս, քանի որ աւելի հեռու ենք Կրինիչէն քան Փարիզէն։

Այս նկատողութիւնք անհրաժեշտ էին ցոյց տալու համար այն փոփոխութիւնքը որ պիտի կրեն մեր գործածական քարտէսները։ Չէ թէ միայն Փարիզի միջօրէականէն հաշուուածները նորոգել անհրաժեշտ է՝ այլ նաև նոյն իսկ Կրինիչով շինուածները թերի են ասկէ վերջ, ինչու որ վերջին որոշման մը իրաւացի սրբագրութիւն մը կայ նախորդ սովորութեան, ըստ որոյ 0էն 360⁰ կը հաշուէին երկայնութիւնը։ Եթէ երկիրս երկու հաւասար մասերու բաժնենք բևեռներէն անցնող մակարդակով մը՝ բնականաբար հատման գիծը կազմող շրջանակը Միջօրէական պէտք է համարուի և ոչ թէ երկու կիսաշրջանակները զատ զատ Միջօրէականներ։ Ըսել է թէ մեր 360 միջօրէականները իրականապէս 180 հատ ամբողջ շրջանակներ են և հետևաբար 180 Միջօրէական կայ 360 աստիճանները կազմող։

Քանի որ այսպէս է՝ ասա ուրեմն 360⁰ները թողունք մէկդի և 180 միայն հաշուենք Կրինիչին արևելեան կողմը գտնուածներն աւելի (+) նշանակելով և արևմտեաններն պակաս (—) նշանակելով։ Օրինակի համար Պոլսոյ երկայնութեան աստիճան է, այսուհետև +28⁰, 59, 14, Մանչէսթր 2, 14, 44, Փարիզ +2⁰, 20, 14, Նիւ-Եորք 74, 00, 25, ևն։

Եթէ քաղաքի մը երկայնութեան աստիճանը տրուած ատեն աւել կամ պակաս մասնիկը չաւելցուի և կամ չըսուի թէ Կրինիչի արևելեա՞ն կողմն է թէ արևմտեան՝ շփոթութիւն կրնայ պատճառել. ինչպէս որ շփոթութիւն կը պատճառէ եթէ քաղաքի մը լայնութեան աստիճանը տրուած ատեն չըսուի միանգամայն թէ քաղաքն հարաւային կիսագնդին վրայ թէ հիւսիսային, ինչպէս նաև բևեռի խօսք եղած ատեն պէտք է ըսել թէ հարաւայի՞ն բևեռ է թէ հիւսիսային։

Առաջին Միջօրէականի համար Կրինիչի ընտրութիւնը Ֆրանսացւոց մեծ դայրոյթ պատճառեց։ Փարիզ զոր մայրաքաղաքաց մայրաքաղաք կը համարին Ֆրանսացիք արուեստից համար, գիտութեանց համար, գեղարուեստից համար և մէկ խօսքով ամեն բանի համար, դժուարաւ պիտի թողու որ Անգլիական, մանաւանդ Անգլիական Կրինիչ մը առաջին կոչուի Միջօրէականի համար։ Պ. Ժանսըն, Ֆրանսական պատուիրակը, ձեռնպահ մնացեր է քուէարկել ա՛յս ըսել այնպիսի որոշման մը համար որ թէպէտ ազգասիրական կամ լաւ ևս փարիզասիրական զգացմանց վիրաւորիչ է՝ սակայն գիտական տեսակէտով աւելի օգտակար է քան վնասակար։

Նաւարկութեան համար անգլիական Քարտէսներ, անգլիական Աստեղագիտական ցուցակներ, անգլիական հաշիւներ գործածող նաւերն 14,900,000 թօնօ են, մինչդեռ 1,735,000 թօնօ են Ֆրանսականները գործածողք. ինչպէս որ կը տեսնուի, ժողովին մեծամասնութիւնը Կրինիչի կողմն էր նաւարկութեան մէջ այս թուանշանական ապացուցութիւնը տեսնելով։

Գանք ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺԱՄՈՒՆ։

Ի՞նչ ըսել է տիեզերական ժամ, ի՞նչ պէտք կայ տիեզերական ժամու, ի՞նչ անպատեհութիւն կար ցարդ գործածեալ ժամուց մէջ որ Ֆիլատելֆիոյ ժողովն զայս եւս սրբագրել պատշաճ դատեց։ Այս ամենը ինքնաբերաբար հասկնալ շատ հեշտ չէ ո՛չ մեզ համար որ մեր Եէնի ճամիի նշանաւոր ժամացոյցը ունինք և ո՛չ ալ Եւրոպայի մէջ հասարակ ժողովրդեան համար որ ժամանակի խնդիրներու մասին աւելի խակ է քան Տաճկաստանցիք։

Տիեզերական ժամը աստեղագիտաց համար է։ Ենթադրենք թէ երկնային երևոյթ մը տեղի պիտի ունենայ, ժամը քանիի՞ն։ Մենք կը հաշուենք և կը գտնենք, զորօրինակ, թէ կէս օրին տեղի պիտի ունենայ. բայց երբ կէս օր է աստ, կէս օր չէ տարբեր երկայնութեան աստիճաններու վրայ գըտնուած քաղաքաց մէջ։ Աստեղագէտք միշտ պէտք ունին ունենալու այնպիսի ժամ մը որ ամենուն համար միևնոյն վայրկեանը ցոյց տայ։ Մինչև ցարդ կը հաշուէին և կը գտնէին. ահա այս հաշիւէն ազատելու զերծ մնալու համար է որ տիեզերական ժամը որոշեցին։

Ահաւասիկ տրուած որոշումը։

Տիեզերական ժամը կ'սկսի երբ կէս գիշեր է ի Կրինիչ (միջին ժամով), և օրը կը վերջանայ յաջորդ կէս գիշերին։ Ըսել է թէ տիեզերական օրը 24 ժամ է և ոչ 12 ինչպէս որ քաղաքային պիտոյից համար կը գործածուի։ Սովորական չէ մեզ համար ըսել թէ ժամը 15 է, 20 է, 23 է, բայց աստեղագէտք արդէն սովորած էին ասոր և ապագային դժուարութիւն չպիտի կրեն։

Ցիրուի անպատեհութիւն մը կայ այս որոշման մէջ. այն է թէ Կրինիչէն տարբեր քաղաքներ կէս գիշեր չէ երբ կէս գիշեր է ի Կրինիչ։ Կ. Պոլիս 1 ժամ և 56 վայրկեան անցած պիտի ըլլայ, երբ ժամացոյցներ տիեզերական ժամով կէս գիշեր նշանակէ։ Որքան որ հեռանանք Կրինիչէն, այնքան տարբերութիւնը կը մեծնայ և կան երկիրներ ուր առաւօտ է երբ կէս գիշեր նշանակէ տիեզերական ժամը, և Կրինիչի հակոտնեայք ճիշդ կէս օրին տիեզերական կէս գիշեր պիտի նշանակեն։

Տիեզերական ժամը որքան որ Աստեղագիտական ցուցակներու, հաշուոց, հետևաբար աստեղագիտաց ու Նաւապետաց գործածութեանը համար միայն հնարեալ կը թուի, սակայն օգնականութիւն պիտի ունենայ երկաթուղեաց ընկերութեանց և հեռագրատանց համար։ Ամերիկայի մէջ ընդարձակ երկաթուղւոյ գիծեր կան ուր ժամերու տարբերութիւնը մեծ վնասներ ունի և երթևեկութեան ժամանակացոյցներու խանգարման պատճառ կըլլայ։ Երկաթուղիք ալ այս տիեզերական ժամով կարգադրելով կառախմբոց երթևեկը, այլ ևս չը պիտի սխալուին իրենց ճամբաները չփոթեցնող և նոյն ժամացոյցները խանգարման վիճակի ենթարկող կարգադրութեանց գործածութեանց։

Տաճկաստանի համար այս վերջին որոշումը չունի այնքան մեծ կարևորութիւն օրական գործողութեանց համար, քանի որ երկաթուղիք չեն առատ։ Միմիայն եթէ ուզենք աստեղագիտութեամբ զբաղիլ, երկնային մարմինները դիտելու, հաշուելու ևն. համար պիտի գործածենք։

Վերջացնելէ առաջ ըսեմ նաև թէ մեթրական դրութեան խնդիրն ալ նիւթ եղաւ վիճաբանութեանց, ոչ իբր գիտական խընդիր այլ իբր Անգլիոյ կառավարութեան յետաղէմ ընթացքին մի դիտողութիւն, որ յայտնապէս տեսնելով թէ ինչ օգուտներ կան մեթրական դրութիւնն ընդունելու մէջ և անոր տիեզերական հանգամանք մը տալով ի՛նչ դիւրութիւնք պիտի ծագին՝ այսու հանդերձ ցարդ չէ ուզած կամ չէ կրցած իրեն ժողովրդեան ընդունել տալ։ Անգլիայի գիտունք իրենք իսկ կը խոստովանին ամենալով այս ազգային յամառ միապաղութեան վրայ որ չուզեր համակերպիլ ժամանակին յառաջդիմութեան։ Եւ երբ ամեն ազգեր, առանց որ և է անձնասիրութեան ամենայն զոհողութեամբ կ'ընդունին Կրինիչն իբր առաջին միջօրէական և տիեզերական ժամը, արդարև Անգլիացիք պարտին խոնարհիլ Ֆիլատելֆիոյ ժողովոյն յայտնած փափաքին ու մեթրն մտնել այս ուղւոյն մէջ՝ հետևելով Տաճկաստանի, որ այս մասին Անգլիոյ օրինակ կը հանդիսանայ։

Ց. ԵՈՒՍՈՒՖԵԱՆ

---

(1) Վճռաբեկ դատարանի Խառն ժողովը կը բաղկանայ Քաղաքական և Պատժական ատեաններու համագումար անդամներէ։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊՈԼՍՈՅ ՀՐԱՊԱՐԱԿԻՆ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Կ. ՊՈԼԻՍ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 6 — 13

ՑՈՐԵՆ.— Հրապարակը հաստատութեան մէջ կը շարունակէ, հասութից նուազութեան պատճառաւ գները բարձրանալու վրայ են։ Հասաւ 20,000 գրիւ կակուղ ցորեն, 2,000 գրիւ կարծր ցորեն և 12,000 գրիւ Կիրգա։ Վաճառեցաւ 2,000 գրիւ կարծր ցորեն, 20,000 գրիւ կակուղ և 12,000 գրիւ Կիրգա։ Պատրաստ ոչինչ։

ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆ.— Շաբթուս կարեւոր գործ մը չէ եղած, զի ապրանք կը պակսին։ Հրապարակին վրայի գնողք 13 ղր. կուտան գրիւին։

ԳԱՐԻ.— Տեղական սպառման համար 18,000 գրիւ վաճառեցան ի գին 11 ղրշ գրիւը։ Այս գներով յաճախորդք չեն պակսիր։

ՋԱՎՏԱՐ.— Շաբթուս վաճառեցաւ իբր 240,000 օխայի չափ մաս մը ի գին 25-25½ փրյ և ի վերջոյ 14 ղշ գրիւը։ Պահանջը լաւ է։

ԼՈՒԲԻԱ.— Տեղական սպառման համար իբր 300,000 պարկ Ռումէլիի և Դանուբի ապրանք վաճառեցան առաջինն ի գին 115-125 ղշ իսկ երկրորդը 130 ղշ 100 օխան։ Տեղական սպառման համար պահանջը լաւ է։

ԲԱԿԼԱ.—Շաբթուս գործ չէ եղած այս տեսակին վրայ։ Գները թոյլ են 26 փրյի· համար։

ՍԻՍԵՌՆ.— Այս շաբթու Տարտանելի լաւ ապրանք վաճառեցան ի գին 52-53 փրյ օխան։

ՔԹԱՆԱՀՈՒՆՏ.— Այս շաբթու մաս մը 40,000 գրիւ լաւ ապրանք վաճառեցան ի գին 53½ փրյ օխան։ Հաստատ գներով պահանջը լաւ է։

ՍՈՒՍԱՄ.— Իբր 22,000 օխայ Մէրսինի ապրանք ծախուեցան ի գին 112 փրյ օխան։ Հրապարակը հաստատ է և պահանջը լաւ։

ՔԱՆԱՐԵԱ ԵԷՄԻ.— Այս շաբթու վաճառեցաւ իբր 80,000 օխայ ի գին 53-54 փրյ օխան։ Պահանջը լաւ է․ ապրանքը կը պակսին։ Գները հաստատ են։

ՔԷՆՏԻՐԻ ՀՈՒՆՏ.— Հրապարակին վրայ բազմաթիւ գնողներ կան, բայց ապրանք կը պակսին։

ԱՖԻՈՆԻ ՀՈՒՆՏ.— Նոր հունձքի ապրանք 57½-58 փրյ կ'արժեն։

ԲԱՄԲԱԿԻ ՀՈՒՆՏ.— Գործ չէ եղած այս տեսակին վրայ։

ԱԼԻՒՐ

Հրապարակը կը շարունակէ իւր գործունէութեան մէջ, գները բարձրանալու միտեալ են արմտեաց նուազութեան համար։ Վաճառեցաւ այս շաբթու 25,000 պարկ։ Պատրաստ կայ 14,000 պարկ, որոց 10,000 պարկը Օտէսա, 2,000ը Պրայլա, 2,000ը տեղական։

ԳԱՂԹԱԲԵՐՔ

ՇԱՔԱՐ.—Հասաւ 3,360 պարկ։ Վաճառեցաւ 4,360 պարկ։ Պատրաստ 1,000 պարկ։ Հրապարակը բանուկ է․ գնոց բարձրացումէն քաջալերուելով սպառման գնողներ կան։

ԽԱՀՈՒԷ.— Հասաւ 600 պարկ։ Վաճառեցաւ 1,700 պարկ։ Պատրաստ 4,500 պարկ։ Հրապարակը խիստ բանուկ է թէ՛ տեղականի և թէ՛ դրսի համար հաստատ գներով։

ԲՐԻՆՁ.— Հասաւ 1,400 պարկ Անգլիական, 700 պարկ Իտալական։ Վաճառեցաւ, 900 պարկ Անգլիական և 800 պարկ Իտալական։ Պատրաստ 5000 պարկ Անգլիական և 300 պարկ Իտալական։ Հրապարակը բաւական բանուկ էր այս շաբթու, հաստատ գներով։

ՄՈՄ.— Հասաւ ոչինչ։ Վաճառեցաւ 500 սնտուկ։ Պատրաստ 2,500 սնտուկ։ Պահանջը տկար, տկար գներով։

ՔԱՐԻՒՂ.— Հասաւ ոչինչ։ Վաճառեցաւ 2,000 սնտուկ Ռուսական։ Պատրաստ 7,000 սնտուկ Ամերիկայի և 18,000 սնտուկ ու 500 վարիլ Ռուսական։ Շաբթուս գործերը աննշան եղան, բայց դրանովիտով պահանջ կայ հաստատ գներով։

ԱՊԱԿԻ.— Հասաւ ոչինչ։ Վաճառեցաւ 1,000 սնտուկ։ Պատրաստ 12,000 սնտուկ։ Հրապարակը հաստատ և գնողներ կը տեսնուին անշարժ գներով։

ՊՂՊԵՂ. — Գները տկար են։

ՈԳԻ

ԱԼՔՈԼ.—Հրապարակը հանդարտ է ապրանաց նուազութեան պատճառաւ, գները թոյլ։ Հասաւ 43 տակառ։ Վաճառեցաւ 43 տակառ։ Պատրաստ 150 տակառ։

ՌՈՄ. —Պահանջը լաւ կերպով կը շարունակէ հաստատ գներով։ Հասաւ 200 տակառակ։ Վաճառեցաւ 200 տակառակ։ Պատրաստ 350 տակառակ։

ՄԵՏԱՂՔ

ԵՐԿԱԹ.— Կարեւոր փոփոխութիւն մը չկայ ո՛չ աստ և ո՛չ ալ Եւրոպական հրապարակաց վրայ։ Հրապարակին վրայ քիչ շատ գնողներ կը տեսնուին․ գները անփոփոխ են։ Այս շաբթու հասաւ 150 թօնօ երկաթ և վաճառեցաւ 170 թօնօ։

ԱՆԱԳ.— Հասաւ 60 տակառակ։ Վաճառեցաւ 30 տակառակ։ Պատրաստ 150 տակառակ։ Հրապարակն հանդարտ է և գները թոյլ։

ՉԷԼԻԿ.— Հասաւ ոչինչ։ Վաճառեցաւ 150 սնտուկ։ Պատրաստ 1,750 սնտուկ։ Հրապարակը մնայունէ տկար գներով։

ՔԱՐՖԻՍԱ.— Հասաւ ոչինչ։ Վաճառեցաւ 1,300 տակառակ։ Պատրաստ 2,400 տակառակ։ Հրապարակը բաւական բանուկ է անփոփոխ գներով։

ԹԷՆԷՔԷ.— Հասաւ 250 սնտուկ։ Վաճառեցաւ 280 սնտուկ։ Պատրաստ 500։ Պահանջը աննշան և գները թոյլ են։

ՑԻՆԿՕ.— Հասաւ ոչինչ։ Վաճառեցաւ 50 տակառակ։ Պատրաստ 700 տակառակ։ Հրապարակը հանդարտ է, բայց գները բռնուած։

ՄԱՆԻՖԱԹՈՒՐԱ

ՄԱՀՈՒՏԻ.— Այս շաբթու մաս մը ամբողջ եարտա միջին ապրանք վաճառեցան ի գին 5 և մաս մ'ալ «Էֆէ» ըսուած տեսակէն ի գին 5 7/10 ղշ լիպրան։

ԼՈՆԿ ԳԼՈԹ. —Այս շաբթու կարեւոր գործ մը տեղի չէ ունեցած։

ԵԷԼՔԷՆ ՊԷԶԻ.— Այս շաբթու առաջին ձեռքէ մաս մը ապրանք վաճառեցան ի գին 4⅝ ղրշ լիպրան։

ԽԱՄ ԱՍԹԱՐ.— Այս շաբթու առաջին ձեռքերէ կարեւոր գործ մը չէ եղած․ մանրամասն վաճառմունք կը լինին։

ԹԻՆՉԻՖ.— Առ ի նուազութենէ գործառնութեանց, գները անկեալ վիճակի մէջ են։

ՊԱՍՄԱ.— Գործառնութիւնք անկարեւոր եղան, գները տկար են։

ՄԱՆԱԾ.— Շաբթուս գործառնութիւնք աննշան էին․ միայն կամրյոտ բարակ մանածները լաւ պահանջ մը կը վայելեն։

ՀԱՆՔԱԾՈՒԽ

Մանրամասն վաճառմունք լաւ էին այս շաբթու հաստատ գներով։ Հասաւ 1300 թօնօ Նիւգասըլ։ Վաճառեցաւ 1,600 թօնօ։ Պատրաստ 14,000 թօնօ։

ԱՐՏԱԾՈՒԹԻՒՆ

ԹԻՖԹԻՔ.— Այս շաբթու ամենեւին վաճառում տեղի չէ ունեցած աստ։ Պատրաստ 6,000 հակ։ Հրապարակը կարի հանդարտ է առանց գնորդի․ գներն անուանական են։ Լօնտրայէն 32 հակի վաճառումը կիմացնեն ի գին 20½ բէնս լիպրան։

ԲՈՒՐԴ.— Շաբթուս որեւիցէ գործ տեղի չէ ունեցած։ Հրապարակը կարի հանդարտ է թոյլ գներով։

ՄԵՏԱՔՍ.— Վաճառեցաւ 24 հակ Քօզանտ ի գին լիրայ Օսմ. 190-210, 4 հակ Ռումէլի լիրայ Օսմ. 1½, 4 հակ Քութայիս լաւ 122 ղշ արծաթ․ 10 հակ Քութայիս գապա 77-79․ 11 հակ Ռէշտ Փր. 29½ 4 հակ Նուխի 42 Փր. և 8 հակ Շամախի 37-38½ Փր. օխան։ Պատրաստ 180 հակ։ Հրապարակը միջակ է, բայց գնորդներ կան զի գները տկար են։

ԲԱՄՊԱԿ.—Շաբթուս նշանակելի կարեւոր բան մը չկայ․ հրապարակը հանդարտ է։

ՔԷՆՏԻՐ.— Շաբթուս նշանաւոր գործառնութիւն մը չէ եղած։ Հրապարակը հանդարտութեան մէջ կը շարունակէ։

ԿԱՊԵՐՏ.— Շաբթուս գործառնութիւնք 1,500 մէթրօ Ֆէրաղան ի գին 16½-17½ Փր․ քառակուսի մէթրօն 72 Սումախ Փր 74․ 40 հատ նոր «Նամազի» Շիրվանի Փր․ 25, և իբր 350 հատ տաճկական Նամազի ի գին 118 ղշ և Քիլիմ 46-48 Փր․ հատը։ Պատրաստ 4,500 կտոր։ Հրապարակը հանդարտ է և վերոյիշեալ վաճառմունք ստիպեալ լինելով վար գներով եղած են։

ԱՖԻՈՆ.— Այս շաբթու վաճառեցան 20 սնտուկ որոց 14ը Մալաթիա, 6ը՝ 220, 4ը՝ 232 և 4ը՝ 234½ ղշէն։ 6 սնտուկ Զիլէ և Թօքաթ 2ը՝ 210 և 4ը՝220 ղշ օխան։ Պատրաստ 290 կողով, նոր հունձք։ Հրապարակին վրայ հաստատ գնորդներ կան մասնաւորապէս լաւ բարակ տեսակաց համար որոնք լաւագոյն գներ կ'առանան։

ՔԻԹՐԷ.—Այս շաբթու վաճառեցաւ 8000 օխայ որոց 1500 օխայ լաւ բռնուած ճերմակ ի գին 25։ 3500 օխայ երկրորդական բռնուած ի գին 22-22½։ 1,500 օխայ բնական ճերմակ Կեսարիոյ ի գին 21 և 1,500 օխայ լաւ դեղին ի գին 15-16 ղշ օխան։ Պատրաստ 2,000 օխայ։ Հրապարակը բանուկ է և գնորդներ կան հրապարակին վրայ հաստատ գներով։

ՄԱՀՄՈՒՉԻԿ. —Այս շաբթու վաճառեցաւ 80 օխայ Իսքիլիփ լաւ ի գին 100 ղշ օխան․ պատրաստ կայ հրապարակին վրայ 500 օխայ, հրապարակը հանդարտ և գները լքեալ են։

ՍԱԼԷՓ. —Այս շաբթու վաճառմունք տեղի չունեցան։ Հրապարակը հանդարտ է, գները թոյլ են։

ՄԵՂՐԱՄՈՄ. —Այս շաբթու վաճառում տեղի չունեցաւ։ Պատրաստ 2,000 օխայ։ Հրապարակը հանդարտ է։

ԿԱՂԻՆ.— Այս շաբթու վաճառեցաւ 1,200 կենդինար, Ֆրանգ ի նաւ ի գին 74 ղշ կենդինարը։ Հրապարակին վրայ գնողներ կան հաստատ գներով։

ՃԷՀՐԻ. — Այս շաբթու վաճառեցաւ 150 պարկ Գայսար և «Ալը» Իսկիլիպ ի գին 9¼ ղշ օխան։ Պատրաստ 1,500 պարկ։ Հրապարակը կարի հանդարտ է և գնորդներուն մեծ մասը գնոց անկումէն քաջալերեալ կը գնեն։

ՄԱԶԻ.— Այս շաբթու ամենեւին վաճառում տեղի չունեցաւ․ բայց հրապարակը հաստատ է։ Պատրաստ միայն 46 պարկ սեւ։ Հրապարակը հաստատ է և գնողներ կան։

ՄՈՐԹ.— Այս ապրանաց վրայ գործառնութիւնք հետեւեալներն են․

ԿՈՎԻ ՄՈՐԹ.—Այս շաբթու վաճառեցաւ մաս մը թաց կովու մորթ ի գին 7 ղշ և մաս մ'ալ չոր լաւ տեսակ ի գին 11 ղշ օխան։

ԱՅԾԻ ՄՈՐԹ.— Իբր 1,500 կտոր Ասիական վաճառեցան ի գին 20 ղշ զոյգը։

ՈՉԽԱՐԻ ՄՈՐԹ.—Այս շաբթու գործ չէ եղած այս ապրանաց վրայ։

ԵՂՋԻՒՐ. — Շաբթուս վաճառում տեղի չէ ունեցած․ գները մնայուն են ի գին 3¼-3¾ ղշ օխան։

ԸՆԹԱՑԻԿ ԳԻՆԵՐ

Ցորեն Կիրգա Ռուսիոյ	Լիտրայ	57—59	Ղշ.	18¾—20¼	Քիլէն		
» կարծր	»	57—61	»	17—18¾	»		
» Կակուղ Կալաց և Պրայլա	»	57—58	»	18—19	»		
» » Պուլղարիոյ	»	58—59	»	18—18¾	»		
» » Ռումէլի	»	57—58	»	18—19	»		
Եգիպտացորեն, Կալից, Իսմայիլ և Օտէսա	»		»	13—	»		
» » Օրտու և Տաճկական			»	12½—	»		
Գարի կակուղ			»	11—	»		
» հաստ			»	10½—	»		
Ջավտար			»	14—	»		
Քթանահունտ (քէթէն թօհումը)			»	26½—26¾	»		
Գանար եէմի			Փրյ	53 — 54	Օխայ		
Նօխուտ Պալըքէսէր			»	40 — 55	»		
» Աթէնք			»	40 — 55	»		
Քէնտիրի հունտ			»	70 —	»		
Պակլա			»	26 —	»		
Սուսամ Մուտանիա Պալըքէսէր			»	109 —	»		
» Մէրսին			»	112 —	»		
Աֆիոնի հունտ			»	57 —	»		
Լուբիա Օրտու			»	110 —115	»		
» Դանուբ և Ռումէլի			»	115 —130	»		
Օտէսա Ա. Ալիւր			Ղրշ.	110 —115	Պարկը		
» Բ. »			»	95 —105	»		
» Գ. »			»	82 —	»		
Ակիմա			»	76 — 78	»		
Պրայլա տեղականի հետ խառնուած			»	68 — 72	»		
Պրայլա			»	68 — 72	»		
Վառնա			»	— —	»		
Շըմէնտըֆէր			»	68 —	»		
Խահուէ			Ղշ	7·00-7·30-7·60-8·00	Օխյ·	100	ոսկին
Լեղակ պէնկալ			»	80—110	»	»	»
» Քուրբայ			»	60— 80	»	»	»
Որդան կարմիր սեւ			»	15— 16	»	»	»
» կարմիր թուխ			»	14— 15	»	»	»
Պղպեղ			»	10½—11—11½	»	»	»
Կինամոն (դարչին)			»	5½-6¼	»	»	»
Գարէնֆիլ			»	8—9	»	»	»
Թէյ սեւ սորին			»	12— 16	»	»	»
Թէյ առաջին և լաւ			»	27— 38	»	»	»
Շաքար Հօլանտիոյ			»	140—160	կենդինարը	103	»
» Գրիէսթէ Ա. (պարկի մէջ)			»	138	»	»	»
» » Բ. (»)			»	127	»	»	»
» » Գ. (»)			»	118—	»	»	»
Ծծումբ			»	34—35	»	100	»
Խունկ (Գիւնլիւք)			»	210—230	»	»	»
Բրինձ Իտալիոյ Ա. Ոփզոն			Ֆրանգ	48—	Պարկը	»	»
» » Բ. »			»	46	»	»	»
» » Ա. սովորական			»	42	»	»	»
» » Բ. »			»	39	»	»	»
» » Գ. »			»	—	»	»	»
» Հնդկական			Ղրշ.	118—124—126—129	»	»	»
Գօլա Գալլիական			»	3¾	Օխյ	»	»
» Անգղիական			»	155	Սնտուկը	»	»
Մոմ			Ղրշ.	7½—	Քիլօ	»	»
,, Գաղիական			»	92—93	»		»
Կազ Ամերիկայի սնտուկ			»	28½—32-35		»	»
» Ռուսիոյ			»	26½—31—32	»	»	»
» » (վարիլի մէջ)			Փարայ	43—	Օխյ	»	»
Ոգի Ռուսիոյ Օլատօֆքա 16 աստիճան			Օխայ	24½ — 25		1	Ոսկւոյ
» » Սօտինսքի			»	26½ — 27			»
» » Խարքով			»	28 — 28½			»
» Վար տեսակ Սէլանիկ և այլն			»	29 — 38			»
Ռօմ Թրիէսթէ			Կալլօն	20 —			»
» Անգղիոյ				9—9¼			»
Անգղիական երկաթ (չուպուղ)				43			կենդինարը
» Երկաթ (տէմէտ)				43			»
Շուէտի » (չուպուղ)				76 —78			»
» » (տէմէտ)				78			»
Տախտակ » (Սաճ) թիւ 1— 4				62 —			»
» » » » 5—10				68 —			»
» » » » 11—14				77 —			»
Կլոր				88			»
Չէմլէր սովորական				56			»
» Մեծ դիրք				65 —67			»
Անագ (գալայ)				570—575—580			»
Կապար (սաչմա)				110			»
» Տախտակ				118—			»
» Խողովակ				110—			»
Չիւիք			Ղրշ.	127—132			Սնտուկը
Գարֆիցա 45 քիլոնոց			»	59— 62			Վարիլը
Թէնէքէ			»	186—		2	Սնտուկը
Պղինձ			»	11¾-12½	Օխյ		»
Ցինկօ			Ֆրանգ	69—70		100	Օխյ
Հանքածուխ Նիւգասըլ (ի վաճառատուն)				17 Շ· 0 Բ· 17 Շ· 6 Բ·			Թօնօն
» » (ծովու վրայ)				20 » 0 » —	»	»	»
» Գարտիֆ (ի վաճառատուն)				20 » 0 » 19	» 6 »		»
» » (ծովու վրայ)				21 » 0 » 22	» 0 »		»
» Հարթըլբուլ				16 » 0 » —	»	»	»
Լիվէրբուլ (անուանական)				15 » 6 » —	»	»	»
Մահուտի			Ղրշ.	5⅞—6½	Լիպրան	Ոսկի	»
Ամերիգան ամբողջ եարտա			»	4½— 5½	»	»	»
» պակասաւոր			»	3⅜ —5¼	»	»	»
Ամթարցու (լօնկ գլօթ) լաւ տեսակն			»	4—4¾	»	»	»
» » » փոքր լիպրա			»	4⅞— 5	»	»	»
» » » ներկուելու (գօտինքթն)			»	5¼— 5⅜	»	»	»
Եէլքէն պէզի լաւ տեսակ			»	4⅜— 4½	»	»	»
» » երկրորդականք			»	4-4¼	»	»	»
Խամ ասթար (չըրթինկ) լաւ տեսակ			»	35 — 48	Թօփը	»	»
» » » միջին »			»	50 — 62	»	»	»
» » » վար »			»	60 — 70	»	»	»
Միւլ 4 թիւ (չափալը) 3 թօփը (30-35-38 ինչ)			Ղրշ.	41—	»	112	
» 16 » (Թէնգիֆ) » » (· · · · · ·)			»	36½—37	»	»	
» 26 » (Աքօչիա) » » (· · · · · ·)			»	50½—	»	»	
Մանած Վամէր 4—14			Ղրշ.	34—37	փքէթը	»	106
» » 18—28			»	44—47	»	»	»
» Էքսդրա (Ֆիլմէնկ) 4—14			»	39—53	»	»	»
» » (· · · ·) 18—28			»	48—58	»	»	»
» Էքսդրա գրօմիթօն 16—24			»	65—68	»	»	»
» Մուլի 8—14			»	55—58	»	»	»
» 20—24			»	69—72	»	»	»
» Կարմիր Իտալիոյ 4—14 լաւ			»	62—70	»	»	»
» » » — երկրորդ			»	51—65	»	»	»
» » Զուիցերիոյ թիւ 20			»	75-83-85	»	»	»
» » Իտալիոյ »			»	62—70	»	»	»
Թիֆթիք առաջին տեսակ			Ղշ.	22½ — 24	օխյ	100	ոսկի
» երկրորդ »			»	20 — 22	»	»	»
» սորին »			»	6 — 13	»	»	»
» Վան			»	13—13½	»	»	»
Բուրդ Քասապ պաշի Ա.			»	8 — 8½	»	»	»
» » » Բ.			»	6 —6½	»	»	»
» Քըրքմա Ա.			»	6¼ - 6½	»	»	»
» » Բ.			»	4- 4½	»	»	»
Մետաքս Խօզանտ			»	190 —210	»	»	»
» Նուխի			Ֆրնք	33 — 42	»	»	»
» Ռէշտ			»	26 — 34	»	»	»
Բամպակ Հալէպ			Ղշ.	5½—5¾	»	»	»
» Ադանա			»	6—6¼	»	»	»
» Իզմիր և շրջակայք			»	6¼-7	»	»	»
Աֆիոն Մալաթիա			»	220—234	»	»	»
» Սէլանիք			»	220—	»	»	»
» Զիլէ Թօքաթ			»	210—220	»	»	»
» Պալըքէսէր			»	190—200	»	»	»
» Էնկիւրիւ			»	180—190	»	»	»
» Նալը խան Պէյ պազար			»	170—175	»	»	»
» Կէյվէ Պիլէճիք			»	170—	»	»	»
» Չըքընթը			»	110—135	»	»	»
Քիթրէ առաջին ճերմակ			»	27 — 28	»	»	»
» աշխատուած ճերմակ			»	20 — 25	»	»	»
» լաւ բնական »			»	20 — 21	»	»	»
» սովորական »			»	18 — 19	»	»	»
» լաւ դեղին			»	16 — 17	»	»	»
» երկրորդ դեղին			»	14 — 15	»	»	»
» Ջամուր			»	3 — 4	»	»	»
Սալէփ լաւ տեսակ			»	16- 16½	»	»	»
» երկրորդ տեսակ			»	14½—15	»	»	»
Մահմուզլյէ առաջին ճերմակ			»	160 —180	»	»	»
» երկրորդ			»	80 —100	»	»	»
» երրորդ			»	60 — 70	»	»	»
Մեղրամոմ լաւ տեսակներ			»	20 — 23	»	»	»
» սորին			»	19 — 20	»	»	»
Կաղին Տրապիզոն			»	73—74	կենդինր	»	»
» Քէրասունի			»	72—74	»	»	»
Ճէհրի էկին			»	–	Օխյ	»	»
» Գայսար			»	9-9½	»	»	»
» Անկորա			»	8¾- 9	»	»	»
» Թօքաթ			»	8-8½	»	»	»
» Չօրում			»	7½—	»	»	»
» Վար տեսակներ			»	—	»	»	»
Եղջիւր			»	3¼— 3¾		»	»
Մորթ գոմէշի չոր			»	9¼— 9½		»	»
» թաց			»	6¼—6½		»	»
» կովի չոր			»	9 —9½		»	»
» թաց			»	5¾— 6		»	»
» Ոչխարի			»	18 — 26		»	»
» Այծի			»	18 — 20		»	»
» Գառին			»	16 —18½		»	»
» Այծուկի			»	—		»	»
» Նապաստակի			»	—		»	»

ԳՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ

(Նոր դրութիւն)

—o—

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ.— Երկու հատորէ բաղկացեալ, որ կը պարունակէ ՈՃ, հանդերձ բառագիտական և մտամարզական վարժութեամբ։

Յօրինեաց

ՄԻՀՐԱՆ Պ. ԱՍՔԱՆԱԶԵԱՆ

Ուսուցիչ հայկական լեզուի եւ գրագիտութեան

Գին բանալի 15 դահեկան։

Գին իւրաքանչիւր հատորի, 10 դահեկան։

Կը ծախուի Պօլսոյ բոլոր Հայ գրավաճառաց քով և կամուրջի գլուխը սուճի Պօղոս աղայի խանութը։

Կը գտնուի նաեւ, Ղալաթիոյ կողմը, թղթավաճառ Յ. Արշակ էֆէնտիի քով։

Կեդրոնատեղին է Արամեան գրատուն, Ցակոբեան խան, վերնայարկ թիւ 12-13։

Դպրոցաց համար 100ին 10 զեղչ։

ՊԱՏԱՍԽԱՆ

Ցայտաքար Ճշմարտութեան դէմ մեր պատասխանը հիմա պատրաստ է, և կը վաճառուի Պահճէ-գաբու ջրավաճառ Պօղոս աղայի խանութը, և Կէտիք-բաշա մեր բնակարանը․ գին 60 փարայ, դուրս ղրկուելու բօստային ծախքը մեր վրայ ըլլալով։

Սոյն գրքոյկը երեք մասերու բաժնուած է, կը պարունակէ նախ, Բողոքականաց մեզի դէմ հրատարակած Ցայտաքար Ճշմարտութեան դէմ մեր պատասխանը։

Երկրորդ, Ս. Գրոց վկայութիւններով ցուցուած է թէ Բողոքականութիւնը Քրիստոսի առաքեալներուն քարոզած պարզ քրիստոնէութիւնը չէ․ Երրորդ մեր (Քրիստոսի աշակերտաց) ընդունած և քարոզած քրիստոնէական վարդապետութիւնները համառօտիւ։

Աւետարանիչ

Գ. Ն. Շէյմանեան

11—15

ԻԼԱՆ

ՊԱՊԸ ՍԷՐԱՍՔԵՐԻ

Տէրքսաատէթ վէ պէլատի սէլասէտէ քեարին էպնիյէի ասքէրիյէ ինշաաթ վէ թամիրաթը իչուն իշպու պին իւչ եիւզ սէնէի րումիէսի թէշրինի սանիսի պիրինճի կիւնիւնտէն իթիպարէն պիր սէնէ զարֆընտա լիւզումի օլան ճամ թալիպինտէն միւպաեա օլընմագ իւզրէ չէրայիթի մուգարրէրէսի վէճհլէ տէրտէսթի մինագասա օլուպ թէշրինի էվվէլ եիկիրմիսինտէ գարարը գաթիսի իճրա վէ իրթէսի կիւնի եիւզտէ պէշ թէնզիլաթը գապուլ օլունաճաղընտան իթայէ թալիպ օլանլարըն եէվմի մէզքիւրէ տէյին միւթէպէր քէֆիլլէրիլէ պէրապէր խաթիէ քեամ վէ ինշաաթ տայիրէսի իքինճի շուպէսինէ միւրաճաաթ իթմէլէրի պէյան վէ իլան օլունուր։

14 թէշրինի էվվէլ

1—3

ԻԼԱՆ

Էրզրումտա մուգիմ Պալթաճեան Կարապետ վէ Յովհաննէս վէ Մկրտիչ իլէ տախիլի դումրանիա պուլունան Տէրըսաատէթտէ Եուսուֆեան խանընտաքի պիրատէրլէրի Յակոբ վէ Նազարէթ աղալէրին Էրզրում Թիճարէթ մահքէմէսի թարաֆընտան մուվագգաթէն իֆլասլարը թահթը հիւքմէ ալընմըշ օլտուղընտան՝ դիքէր օլունան գումրանիատէ ալաճագլէրի պուլունան էսհապը մաթլուպըն 300 թըշրինի էվվէլ 4 թարիխինտէն իթիպարէն գըրգ կիւն զարֆընտա սէնէտաթ վէ մէքթուպլէրի իլէ պէրապէր Էրզրումտա թաշ մաղազալէրինտէ թէշքիլ իտէն մասայա միւրաճաաթ իլէ մահքէմէի մէզքիւրէ րիյասէթի ճանիպինտէն վուգու պուլան իշար իւզէրինէ Տէրըսաատէթ մահքէմէի թիճարէթ իճրա տայրէսինտէն իլան օլունուր։

11 թըշրինի էվվէլ 11

ԻԼԱՆ

Եօրկի Բէրիքլի իլէ Վասիլ վէ Թարսիյէ գարըլարը Եունան տէվլէթի թէպաասընտան Եօրկի Իփսիրիտիսիյէ օլան տէյնինը մահքիւմէսինին թէմինիյէսի իչիւն Լիմօն իսկէլէսինտէ Լիմօնճըլար ճատտէսինտէ պիր թարաֆը Լիմօն իսքէլէսի ճատտէսի վէ պիր թարաֆը տէնիզտէն թումթա չէօփլիւք վէ տիկէր թարաֆը Տիմիթրի վէ ախէրին միւթասարրըֆ օլտուգլարը մաղազա վէ թարաֆը րապի Լիմօնճըլար ճատտէսի իլէ մահտուտ օլուպ, ալէլթախմին ճէպհէսի օթուզ իքի վէ ամիգ գըրգ իքի դըրա իքի ֆէվգինտէ իքի օտա վէ միւշթէմէլաթը սայիրէյի հավի վէ սէնէվի գըրգ պէշ ատէտ Օսմանլը լիրասը քիրա կէօթիւրիր օթուզ տօգուզ Նօմէրօ իլէ մուրագգամ պիր պապ լիմօնճը մաղազասը կէտիկլինտէն իւզ էքիրմի սէհիմ իթիպարը իլէ միւթէսարրըֆ օլտուղը օթուզ սէհիմի պունտան մուգատտէմ մէզայէտէյէ գօնուլարագ՝ Օսմանլը լիրասը իւզըրուշ հիսսէյէ իլէ օն պէշ պին ղրուշտա թալիպի իւհտէսինտէ գալմըշ վէ թալիպի իւհտէսինտէ իքի զամ գապուլ օլընաճաղը, վէ դիքէր օլունան եէվմ վէ սաաթտա սօն միւզայետէսի պիլ իճրա գարարը գաթիսի վիրիլէճէք թալիպի էօհտէսինէ կէչիրիլմէսի մուգարրէր պուլընմըշ օլտուղընտան, վէ անտէն սօնրա հէր նէ զամմ վուգու պուլուր իսէ գապուլ օլընմայաճաղընտան մէզքիւր հիսսէյէ խիւրտէ պէշ զամմ իլէ թալիպ օլանլարըն վէ տասա զիյատէ մալիւմաթ ալմագ իսթէյէնլէրին միւտտէթի մէրգում զարֆընտա մահքէմէի թիճարէթ իճրա տայիրէսինէ միւրաճաաթ իլէմէլէրի վէ եէվմ ու վագթը մէզպուրտէ մահալլը մէզքիւրտէ հազըր պուլունմալէրի իլան օլունուր։

300 թըշրինի էվվէլ 15

Արտօնատէր, Ս. ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՑ